

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՅԱՎԻՐԻ**  
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈԴԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ՓՈԽԱԿՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՏՐԱՍՊՈՐՏԱՅԻՆ  
ՄԻՋԱՅԻՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՅՈՒԹԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
(AETR)  
(1-ին մաս)

Պայմանավորվող կողմերը,  
ցանկանալով աշակել ուղեւորների եւ բեռների միջազգային ավտոճանապարհային  
փոխադրումների զարգացմանը եւ կատարելագործմանը,

համոզված լինելով ավտոճանապարհային երթեւեկության անվտանգությունն  
ուժեղացնելու, միջազգային ավտոճանապարհային փոխադրումների ոլորտում աշխատանքի  
որոշակի պայմանները կարգավորող կանոնները Աշխատանքի միջազգային  
կազմակերպության սկզբունքներին համապատասխանեցնելու եւ այդ կանոնների  
պահպանումն ապահովելու համար համատեղ որոշակի միջոցներ ձեռնարկելու  
անհրաժեշտության մեջ,

պայմանավորվեցին ներքոհիշյալի վերաբերյալ.

## ՀՐՈՂՎԱԾ 1. ՍԱՐԱՎԱԾՈՒՄՆԵՐ

Սույն Համաձայնագրի նպատակներով.

ա) "Տրանսպորտային միջոց" նշանակում է՝ շարժիչով տրանսպորտային միջոց կամ  
կցորդ. այս տերմինը ընդգրկում է տրանսպորտային միջոցների ցանկացած  
համակցությունը.

բ) "Շարժիչով տրանսպորտային միջոց" նշանակում է՝ ցանկացած ինքնագնաց  
ավտոճանապարհային տրանսպորտային միջոց, որը սպիրաբար օգտագործվում է  
ուղեւորներ եւ բեռներ ավտոճանապարհով փոխադրելու կամ ավտոճանապարհի վրա  
ուղեւորներ եւ բեռներ փոխադրելու համար նախատեսված տրանսպորտային միջոցները  
քարշակելու համար. այս տերմինը չի ընդգրկում գյուղատնտեսական տրակտորները.

գ) "Կցորդ" նշանակում է՝ ցանկացած տրանսպորտային միջոց, որը նախատեսված է  
շարժիչով տրանսպորտային միջոցով քարշակելու համար եւ ներառում է  
կիսակցորդները.

դ) "Կիսակցորդ" նշանակում է՝ ցանկացած կցորդ, որը նախատեսված է շարժիչով  
տրանսպորտային միջոցին միացնելու համար այնպիսի եղանակով, որ դրա մի մասը մնա  
տրանսպորտային միջոցի վրա, եւ դրա քաշի եւ բերի քաշի զգալի մասն ընկնեն  
տրանսպորտային միջոցի վրա.

ե) "Տրանսպորտային միջոցների համակցություն" նշանակում է՝ միացված  
տրանսպորտային միջոցներ, որոնք, որպես մեկ ամբողջություն, երթեւեկում են  
ավտոճանապարհով.

զ) "Թույլատրելի առավելագույն քաշ" նշանակում է՝ բարձված տրանսպորտային  
միջոցի թույլատրելի առավելագույն քաշ հրչակված՝ այս Պետության իրավասու մարմնի  
կողմից, որտեղ գրանցված է տրանսպորտային միջոցը.

է) "Ավտոճանապարհով փոխադրում" նշանակում է՝ ուղեւորների եւ բեռների  
փոխադրման համար օգտագործվող հասարակական տրանսպորտային միջոցների  
ցանկացած

ուղեւորություն ազատ ճանապարհներով՝ լինեն դրանք բարձված վիճակում, թե ոչ.

ը) "Միջազգային ավտոճանապարհային տրանսպորտ" ["Միջազգային  
ավտոճանապարհային փոխադրում"] նշանակում է՝ ավտոճանապարհային փոխադրում, որը  
ներառում է առևազն մեկ սահմանի հատում.

թ) "Կանոնավոր ծառայություններ" հասկացությունը նշանակում է՝  
ծառայություններ, որոնք նախատեսում են որոշակի երթուղով, որոշակի  
տարածություններով ուղեւորների փոխադրում, նախապես սահմանված կանգառներում  
ուղեւորների նստեցում եւ իշեցում:

Պայմանավորվող կողմերի իրավասու իշխանությունների կողմից հաստատված եւ

փոխադրողի կողմից մինչեւ գործածությունը հրապարակված ծառայությունների եւ փաստաթղթերի գործողությունը կանոնակարգող նորմերը սահմանում են փոխադրման պայմանները եւ, մասնավորապես, ծառայությունների հաճախականությունը, ժամանակացույցը, սակագները եւ ուղեւորներին փոխադրելու պարտականությունը՝ այնքանով, որքանով այդ պայմանները սահմանված չեն այլ օրենքով կամ կանոնակարգով:

Որեւէ մեկի կողմից կազմակերպված ծառայությունները, որոնք, բացառությամբ այլ ուղեւորների, նախատեսում են որոշակի ուղեւորների փոխադրում եւ հրականացվում են այս հասկացության առաջին ենթակետում սահմանված պայմաններով, համարվում են կանոնավոր ծառայություններ: Նման ծառայությունները, որոնք, մասնավորապես, նախատեսում են աշխատավորների փոխադրում իրենց աշխատավայր կամ աշխատավայրից կամ դպրոցականների փոխադրում դպրոց կամ դպրոցից, այսուհետեւ անվանվում են "հատուկ կանոնավոր ծառայություններ":

Ժ) "Վարորդ" նշանակում է՝ ցանկացած անձ, լինի նա վարձու աշխատող, թե ոչ, որը վարում է տրանսպորտային միջոցը թեկուզ կարծ ժամանակով, կամ որը գտնվում է տրանսպորտային միջոցում, որպեսզի անհրաժեշտության դեպքում վարի մեքենան.

Ժա) "անձնակազմի անդամ" նշանակում է՝ վարորդ կամ հետեւյալ անձանցից մեկը՝ լինի նա վարձու աշխատող, թե ոչ.

- Վարորդի օգնական, այսինքն՝ ցանկացած անձ, որն ուղեկցում է վարորդին՝ որոշակի մանեւրերի ժամանակ նրան աջակցելու եւ սովորաբար տրանսպորտային գործողություններին արդյունավետ մասնակցելու համար, եթե անգամ նա վարորդ չէ՝ սույն հոդվածի "Ժ" կետի սահմանման համաձայն.

- հսկիչ, այսինքն՝ ցանկացած անձ, որն ուղեկցում է ուղեւորներ փոխադրող վարորդին եւ պատասխանատու է, մասնավորապես, ուղեւորներին տրանսպորտային միջոցով երթեւեկելու իրավունք տվող տոմսերի եւ այլ փաստաթղթերի հատկացման եւ ստուգման համար.

Ժբ) "Հարաթ" նշանակում է՝ երկուշաբթի՝ Ժ. 00.00-ից մինչեւ կիրակի՝ Ժ.

24.00-ն ընկած ժամանակահատված.

Ժգ) "հանգիստ" նշանակում է՝ ընդհատվող առևտուն մեկ ժամ ժամանակահատված, որը ազատ կարող է տևորինել վարորդը:

## ՀՈՂՎԱԾ 2. ՈԼՈՐՏԸ

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է ցանկացած Պայմանավորվող կողմից տարածքում միջազգային ավտոճանապարհային փոխադրման նկատմամբ, որն իրականացվում է նշված Պայմանավորվող կողմի տարածքում կամ այլ Պայմանավորվող կողմի տարածքում գրանցված տրանսպորտային միջոցի կողմից:

### 2. Այլուամենայնիվ՝

ա) Եթե միջազգային ավտոճանապարհային փոխադրումների ընթացքում անձնակազմի մեկ կամ ավելի անդամներ չհեռանան այն պետության տարածքից, որտեղ սովորաբար հրականացնում են իրենց մասնագիտական գործունեությունը, այդ տարածքի Պայմանավորվող կողմը կարող է նրա կամ նրանց նկատմամբ չկիրառել սույն Համաձայնագրի որովայթները.

բ) Եթե Պայմանավորվող կողմը, որի տարածքն օգտագործվում է, այլ կերպ չի համաձայնում, սույն Համաձայնագրի դրույթները չեն կիրառվում այն միջազգային ավտոճանապարհային փոխադրումների նկատմամբ, որոնք իրականացվում են.

1. բեռների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներով, որոնց իրենց կառուցվածքով եւ սարքավորումների առանձնահատկությամբ հարմար են ինչից ոչ ավել ուղեւորների (ներառյալ վարորդը) փոխադրման համար եւ նախատեսված են այդ նպատակի համար,

2. ուղեւորների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներով, որոնք իրենց կառուցվածքով եւ սարքավորումների առանձնահատկությամբ հարմար են ինչից ոչ ավել ուղեւորների (ներառյալ վարորդը) փոխադրման համար եւ նախատեսված են այդ նպատակի համար,

3. կանոնավոր ծառայություններով ուղեւորների փոխադրման համար օգտագործվող

տրանսպորտային միջոցներով, երբ երթուղին, որի վրա տարածվում է ծառայությունը, չի գերազանցում 50 կմ,

4. տրանսպորտային միջոցներով, որոնց թույլատրելի առավելագույն արագությունը չի գերազանցում 30 կմ/ժ,

5. զինված ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության, հրշեց ծառայությունների եւ հասարակական կարգի պահպանման համար պատասխանատու ուժերի

կողմից կամ նրանց հսկողությամբ օգտագործվող տրանսպորտային միջոցներով,

6. կոյուղու, ջրհեղեղից պաշտպանության, ջրի, գազի եւ էլեկտրականության հետ կապված ծառայությունների, մայորութիւնների պահպանման եւ հսկողության, աղբի հավաքման եւ վերացման, հեռագրային եւ հեռախոսային ծառայությունների, փոստային իրերի փոխադրման, ռադիոյի ու հեռուստատեսության հեռարձակման եւ ռադիոյի ու հեռուստատեսության հաղորդիչների եւ ընդունիչների հայտնաբերման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցներով,

7. շտապօգնության եւ փրկարարական նպատակներով օգտագործվող տրանսպորտային միջոցներով,

8. բժշկական նպատակներով օգտագործվող մասնագիտացված տրանսպորտային միջոցներով,

9. կրկեսի եւ զվարճանքի պարագաներ փոխադրող տրանսպորտային միջոցներով,

10. մասնագիտացված վթարային տրանսպորտային միջոցներով,

11. տեխնիկական զարգացման, վերանորոգման եւ պահպանման նպատակներով ավտոճանապարհային փորձարկումներ կատարող տրանսպորտային միջոցներով եւ նոր կամ վերակառուցված տրանսպորտային միջոցներով, որոնք դեռևս չեն հանձնվել շահագործման,

12. ոչ առեւտրային նպատակներով անձնական օգտագործման բեռների փոխադրման համար օգտագործվող տրանսպորտային միջոցներով,

13. գյուղացիական տնտեսություններից կաթի հավաքման համար եւ անասունների կերի համար, կաթի բեռնարկերը եւ կաթնամթերքները գյուղացիական տնտեսություններ վերադարձնելու նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցներով:

### ՀՈՂՎԱԾ 3. ՑԱՄԱՋԱՎՐԻ ՈՐՈՇ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՎԱՋԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄ ՉՅԱՍԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԸ ԳՐԱՎԵՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՎԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԿՏՈՒՄԱՎԱՐՎԱՅԻՆ ՓՈԽՎԴՐՈՒՄՆԵՐԻ ՆՎԱՏՄԱՄԲ

1. Պայմանավորվող կողմ չիանդիսացող Պետության տարածքում գրանցված տրանսպորտային միջոցով իրականացվող ավտոճանապարհային փոխադրումների նկատմամբ

յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր տարածքում կիրառում է սույն Համաձայնագրի 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ եւ 10-րդ հոդվածներով նախատեսված դրույթներից ոչ պակաս խիստ դրույթներ:

2. Սույն Համաձայնագրի Պայմանավորվող կողմ չիանդիսացող Պետության տարածքում գրանցված տրանսպորտային միջոցի դեպքում ցանկացած Պայմանավորվող կողմ կարող է սույն Համաձայնագրի հավելվածում նշված բնութագրերին համապատասխանող հսկողության միջոցի փոխարեն պարզապես պահանջել վարորդի կողմից ձեռագիր լրացված օրական գրառումները:

### ՀՈՂՎԱԾ 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՄՆԵՐ

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է կիրառել 5-8-րդ (Արարյա) հոդվածներով նախատեսված նվազագույնից ավելի կամ առավելագույնից պակաս պայմաններ: Այսուամենայնիվ, սույն Համաձայնագրի դրույթները կիրառելի են այլ Պայմանավորվող կողմից կամ Պայմանավորվող կողմ չիանդիսացող Պետության տարածքում գրանցված տրանսպորտային միջոցով միշագգային ավտոճանապարհային փոխադրումների

գործողություններում ներգրավված վարորդների համար:

### ՀՈՂՎԱԾ 5. ԱՆՁԱԿԱՉՄ

1. Ապրանքների փոխադրումներ իրականացնող վարորդների համար նվազագույն տարիքը պետք է լինի.

ա) 7.5 տոննայից ոչ ավելի առավելագույն թույլատրելի քաշ ունեցող տրանսպորտային միջոցների դեպքում, ներառյալ, համապատասխան դեպքերում, կցորդը եւ կիսակցորդը՝ 18 տարեկան,

բ) այլ տրանսպորտային միջոցների համար.

21 տարեկան, կամ

18 տարեկան՝ պայմանով, որ տվյալ անձն ունի Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում ճանաչված մասնագիտական գիտելիքների վկայական, որով հաստատվում է, որ տվյալ վարորդն ավարտել է ավտոճանապարհներով բեռների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցների վարորդների ուսումնական դասընթացը: Պայմանավորվող կողմերը տեղեկացնում են միմյանց սույն Համաձայնագրի շրջանակներում բեռների միջազգային փոխադրումներ իրականացնող վարորդների վրա տարածվող ազգային նվազագույն ուսումնական մակարդակների եւ այլ համապատասխան պայմանների մասին:

2. Ուղեւորների փոխադրումներ իրականացնող ցանկացած վարորդի 21 տարին պետք է լրացած լինի:

Տրանսպորտային միջոցի սովորական կայանատեղից 50 կմ-ից ավել շառավղով՝ ուղեւորության նպատակով ուղեւորների փոխադրումներ իրականացնող ցանկացած վարորդ պետք է բավարարի նաեւ հետեւյալ պահանջներից մեկին.

ա) նա պետք է առնվազն մեկ տարի աշխատած լինի բեռների փոխադրման ոլորտում՝ որպես տրանսպորտային միջոցի վարորդ, որի թույլատրելի առավելագույն քաշը գերազանցում է 3.5 տոննա.

բ) նա պետք է առնվազն մեկ տարի աշխատած լինի որպես տրանսպորտային միջոցի վարորդ, որն օգտագործվել է սովորական կայանատեղից մինչեւ 50 կմ շառավղով ուղեւորություններում ուղեւորներին ծառայություններ մատուցելու համար կամ ուղեւորներին սույն Համաձայնագրի կարգավորման ոլորտից դուրս այլ ծառայություններ մատուցելու համար՝ պայմանով, որ իրավասու մարմինը համարի, որ դրանով նա ձեռք է բերել անհրաժեշտ փորձ.

գ) նա պետք է ունենա Պայմանավորվող կողմերից մեկի տարածքում ճանաչված մասնագիտական գիտելիքների վկայական, որով հաստատվում է, որ տվյալ վարորդն ավարտել է ավտոճանապարհներով ուղեւորների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցների վարորդների ուսումնական դասընթացը:

### ՀՈՂՎԱԾ 6. ՎԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՐԱՏՎԱԾՆԵՐԸ

1. Հանգստի ցանկացած երկու օրական ժամանակահատվածների միջեւ կամ օրական հանգստի ժամանակահատվածի եւ շաբաթական հանգստի ժամանակահատվածի միջեւ ավտոմեքենան վարելու ժամանակահատվածը (այսուհետ՝ վարելու օրական ժամանակահատված) չի գերազանցում ինը ժամը: Այն կարող է շաբաթական երկու անգամ երկարացվել մինչեւ տասը ժամի:

Վարորդը ոչ ուշ, քան վարելու վեցը շաբաթական ժամանակահատվածը վերցնում է 8 (3)-րդ հոդվածով նախատեսված շաբաթական հանգստս:

Շաբաթական հանգստը կարող է հետաձգվել մինչեւ վեցերորդ օրվա ավարտը, եթե վեց օրվա ընթացքում մեքենան վարելու ընդհանուր ժամանակը չի գերազանցում 6 օրվա վարելու օրական ժամանակահատվածին համապատասխանող առավելագույն ժամանակը:

Կանոնավոր ծառայություններից տարբերվող՝ ուղեւորների միջազգային փոխադրումների դեպքում երկրորդ եւ երրորդ ենթակետերում "վեց" եւ "վեցերորդ" բառերը փոխարինվում են, համապատասխանաբար, "տասներկու" եւ "տասներկուերորդ" բառերով:

2. Մեքենան վարելու ընդհանուր ժամանակահատվածը ցանկացած երկու շաբաթվա

ընթացքում չպետք է գերազանցի ինսուլն ժամը:

### ՀՈՂՎԱԾ 7. ԸՆԴՀԱՌԱԾԵՐ

1. Չորսուկես ժամ վարելուց հետո վարորդը պետք է առնվազն քառասունինս րոպեանոց ընդմիջում անի, եթե և չի սկսում հանգստի ժամանակահատվածը:
2. Այդ ընդմիջումը կարող է փոխարինվել տասնինս քոպեանոց ընդմիջումներով՝ բաշխվելով մեքենան վարելու ժամանակահատվածի վրա, կամ՝ անմիջապես այդ ժամանակահատվածից հետո՝ պահպանելով 1-ին կետի դրույթները:
3. Այդ ընդմիջումների ընթացքում չի կարող իրականացվել այլ աշխատանք: Սույն հողվածի նպատակներով սպասելու ժամանակը եւ վարելուն չհատկացված ժամանակը, որն անցկացվում է ընթացքում գտնվող փոխադրամիջոցում, լաստանավում կամ գնացքում, չպետք է դիտվի որպես "այլ աշխատանք":
4. Սույն հողվածում նշված ընդմիջումները չեն կարող դիտվել որպես ամենօրյա հանգստի ժամանակահատվածներ:

### ՀՈՂՎԱԾ 8. ՑԱՆԿԱՑԻ ԺԱՄԱՆԱԿՎԱՅՐՎԱԾԵՐ

1. Յուրաքանչյուր քսանչորս ժամվա ընթացքում վարորդը պետք է ունենա առնվազն 11 անընդմեջ ժամ ամենօրյա հանգստ, որը կարող է կրճատվել մինչեւ առնվազն ինը անընդմեջ ժամի՝ մեկ շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան երեք անգամ, պայմանով, որ մինչեւ հաջորդ շաբաթվա ավարտը որպես փոխհատուցում նրան պետք է հանգստի համապատասխան ժամանակահատված հատկացվի:

Այս օրերին, երբ, համաձայն առաջին կետի, հանգստը չի կրճատվում, այն կարող է վերցվել երկու կամ երեք առանձին ժամանակահատվածներում՝ քսանչորս ժամվա ընթացքում, որոնցից մեկը պետք է ընդգրկի առնվազն ութ անընդմեջ ժամ: Այս դեպքում հանգստի նվազագույն տետրությունը պետք է երկարացվի մինչեւ տասներկու ժամ:

2. Յուրաքանչյուր երեսուն ժամվա ժամանակահատվածում, երբ տրանսպորտային միջոցը վարում են առնվազն երկու վարորդներ, յուրաքանչյուր վարորդ պետք է առնվազն ութ անընդմեջ ժամ հանգստ ունենա:

3. Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում 1-ին եւ 2-րդ կետերում նշված հանգստի ժամանակահատվածները պետք է երկարացվեն ըստ շաբաթական հանգստի՝ մինչեւ ընդհանուր քառասունինս անընդմեջ ժամի: Այդ հանգստի ժամանակահատվածը կարող է կրճատվել առնվազն մինչեւ երեսունվեց անընդմեջ ժամի, եթե վերցվում է այն վայրում, որտեղ սովորաբար գտնվում է տրանսպորտային միջոցը, կամ գտնվում է վարորդը, կամ առնվազն մինչեւ քսանչորս անընդմեջ ժամի, եթե վերցվում է այլ վայրում: Յուրաքանչյուր կրճատում փոխհատուցվում է հավասարաչափ հանգստով, որն ամբողջությամբ վերցվում է մինչեւ տվյալ շաբաթին հաջորդող երրորդ շաբաթվա ավարտը:

4. Շաբաթական հանգստի յուրաքանչյուր ժամանակահատված, որն սկսվում է մի շաբաթում եւ շարունակվում հաջորդ շաբաթվա ընթացքում, պետք է կցվի այս շաբաթներից որեւէ մեկին:

5. Ուղեւորների փոխադրումների դեպքում, որոնց նկատմամբ կիրառվում է 6(1)-րդ հողվածի 4-րդ կետը, շաբաթական հանգստի ժամանակահատվածը կարող է հետաձգվել մինչեւ հաջորդ շաբաթ, որի հանգստի ժամանակահատվածը դեռևս առկա է, եւ ավելացվի երկրորդ շաբաթվա շաբաթական հանգստին:

6. Ցանկացած բնույթի հանգստ, որը վերցվում է որպես օրական եւ/կամ շաբաթական հանգստի ժամանակահատվածի կրճատման փոխհատուցում, կցվում է առնվազն ութ ժամ ընդգրկող այլ հանգստի եւ տրվում է շահագոգիո անձի խնդրանքով՝ տրանսպորտային միջոցի կայանման վայրում կամ վարորդի հիմնական տեղում:

7. Օրական հանգստի ժամանակահատվածը կարող է վերցվել տրանսպորտային միջոցում, եթե այն ապահովված է անկողնով եւ գտնվում է կանգնած վիճակում:

8. Անկախ վերոնշյալ առաջին կետի դրույթներից, երբ վարորդը ներգրավված է

բեռների կամ ուղեւորների փոխադրման մեջ եւ ուղեկցում է տրանսպորտային միջոցը, որը փոխադրվում է լաստանավով կամ գնացքով, ամենօրյա հանգստի ժամանակահատվածը կարող է ընդհատվել մեկից ոչ ավելի անգամ, եթե բավարարվում են հետեւյալ պայմանները.

ցամաքում անցկացված ամենօրյա հանգստի ժամանակահատվածի մի մասը հնարավոր է վերցնել լաստանավի վրա կամ գնացքում վերցվելիք ամենօրյա հանգստի չափաբաժնից առաջ կամ հետո,

ամենօրյա հանգստի ժամանակահատվածի երկու չափաբաժնների միջեւ ընկած ժամանակահատվածը պետք է հնարավորինս կարճ լինի եւ ոչ մի դեպքում չպետք է գերազանցի մեկ ժամը՝ մինչեւ նստեցումը կամ իշեցումից հետո, նստեցման եւ իշեցման գործողություններում ընդգրկված մաքսային ճեւակերպումներից առաջ կամ հետո,

հանգստի ժամանակահատվածի երկու չափաբաժնների ընթացքում վարորդը պետք է ունենա մահճակալից կամ ննջատելից օգտվելու հնարավորություն:

Ամենօրյա հանգստի ժամանակահատվածը, որն ընդհատվել է այս կերպ, երկարացվում է երկու ժամով:

## ՀՈՂՎԱԾ 9. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ճանապարհային անվտանգությունը չխաթարելու պայմանով եւ կանգառի հարմար վայր հասնելու նպատակով վարորդը կարող է շեղվել սույն Համաձայնագրի դրույթներից անհրաժեշտ չափով՝ անձանց, տրանսպորտային միջոցի եւ թերի անվտանգությունը երաշխավորելու համար: Վարորդը պետք է նշի այդ դրույթներից շեղվելու բնույթը եւ պատճառը հսկիչ սարքի գրանցման թերթիկում կամ իր պարտականությունների մատյանում:

## ՀՈՂՎԱԾ 10. ՀՍԿԻՉ ՍԱՐՔ

1. Պայմանավորվող կողմերն իրենց տարածքներում գրանցված տրանսպորտային միջոցներին պետք է հանձնարարեն հսկիչ սարք տեղադրել եւ օգտագործել՝ համաձայն հետևյալ պահանջների:

ա) Հսկիչ սարքը, ըստ կառուցվածքի, տեղադրման, օգտագործման եւ փորձարկման, պետք է համապատասխանի սույն Համաձայնագրի եւ նրա անբաժանելի մաս հանդիսացող հավելվածի պահանջներին: Հսկիչ սարքը, որն իր կառուցվածքով, տեղադրմամբ, օգտագործմամբ եւ փորձարկմամբ համապատասխանում է EEC Խորհրդի 1985թ. դեկտեմբերի 20-ի հմ. 3821/85 որոշմանը, համարվում է համապատասխանող սույն հոդվածի պահանջներին:

բ) Եթե տրանսպորտային միջոցում տեղադրված հսկիչ սարքի նորմալ եւ պատշաճ օգտագործումը հնարավոր չէ, անձնակազմի յուրաքանչյուր անդամ համապատասխան գրաֆիկական պատկերների միջոցով պետք է գրանցման թերթիկում ձեռքով գրանցի իր մասնագիտական գործունեության եւ հանգստի ժամանակահատվածներին վերաբերող մանրամասները:

գ) Այն դեպքում, երբ տրանսպորտային միջոցից հեռու գտնվելու պատճառով անձնակազմի անդամներն ի վիճակի չեն օգտագործելու սարքը, նրանը համապատասխան գրաֆիկական պատկերների միջոցով գրանցման թերթիկում ձեռքով նշումներ են անում տրանսպորտային միջոցից հեռու գտնվելու ժամանակ իրենց իրականացրած գործունեության մասին:

դ) Անձնակազմի անդամները միշտ պետք է ունենան եւ կարողանան ստուգման համար ներկայացնել վարելու՝ ընթացիկ շաբաթվա եւ նախորդ շաբաթվա վերջին օրվա գրանցման թերթիկները:

ե) Անձնակազմի անդամները պետք է ապահովեն հսկիչ սարքի գործարկումն ու ճիշտ օգտագործումը, թերի աշխատելու դեպքում՝ հնարավորինս շտապ վերանորոգումը:

2. Գործառուն պետք է վարորդներին համապատասխան քանակությամբ գրանցման թերթիկներ տրամադրի՝ մտապահելով, որ այդ թերթիկներն իրենց բնույթով անձնական են, նկատի ունենալով ծառայության տետողությունը եւ վնասված թերթիկների

փոխարինման հնարավոր պարտավորությունը կամ այն, որ դրանք կարող են վերցվել իրավասու հսկիչ աշխատակի կողմից: Գործատուն պետք է վարորդներին տրամադրի միայն հաստատված տիպի թերթիկներ, որոնց կիրառումը հարմար է փոխադրամիջոցում տեղադրված սարքավորման մեջ:

3. Զեռնարկությունները պետք է վերջին մուտքագրման ամսաթվից հետո՝ առևվազն 12 ամսվա ընթացքում, պատշաճ կերպով պահեն սույն հոդվածի 1-ին կետի "բ", "գ" եւ "դ" կետերի համաձայն լրացված գրանցման թերթիկները եւ հսկիչ իշխանությունների պահանջի դեպքում դրանք ներկայացնեն:

## ՀՐԴՎԱԾ 11. ՎԵՐԱՌՍՎԿՈՒՄԸ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՎԱՆ ԿՈՂՄԻՑ

1. Զեռնարկությունն այնպես է կազմակերպում ավտոճանապարհային փոխադրումների գործողությունները, որ անձնակազմի անդամները կարողանան գործել սույն Համաձայնագրի դրույթների համաձայն:

2. Նա պետք է կատարի վարման ժամանակահատվածների, այլ աշխատանքների եւ հանգստի ժամերի կանոնավոր ստուգումներ՝ վկայակոչելով իր տրամադրության տակ ունեցած բոլոր փաստաթղթերը, ինչպիսին անձնական հսկման գրքույկն է: Սույն Համաձայնագրի որեւէ խախտում հայտնաբերելու դեպքում ձեռնարկությունը ձեռնարկում է անհապաղ միջոցներ այն վերացնելու եւ հետագայում դրա կրկնությունից խուսափելու համար. օրինակ՝ աշխատանքի ժամերի կամ երթուղիների մեջ փոփոխություններ կատարելու միջոցով:

3. Վարձու աշխատողներին տրվող վճարումները, եթե նույնիսկ դրանք կատարվում են դրամական պարգևների եւ աշխատավարձի հավելավճարների տեսքով, կապված ուղեւորության հեռավորությունից եւ/կամ փոխադրվող բեռների քանակից, արգելվում են, եթե այդ վճարումներն իրենց բնույթով այնպիսին են, որ կարող են սպառնալ ճանապարհային անվտանգությանը:

## ՀՐԴՎԱԾ 12. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՍՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ձեռնարկում է բոլոր համապատասխան միջոցները սույն Համաձայնագրի դրույթների պահպանումն ապահովելու համար՝ մասնավորապես համապատասխան մակարդակի ավտոճանապարհների ստուգումներ եւ ձեռնարկությունների վայրի ստուգումներ կատարելու միջոցով: Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները պետք է միմյանց տեղյակ պահեն այդ նպատակով ձեռնարկված ընդհանուր միջոցների մասին:

2. Պայմանավորվող կողմերն աշակցում են միմյանց սույն Համաձայնագրի կիրառումն ապահովելու եւ դրա հետ համապատասխանությունը ստուգելու հարցերում:

3. Այդ փոխադրամ աշակցության շրջանակներում Պայմանավորվող կողմերի իրավասու իշխանությունները կանոնավոր կերպով միմյանց ուղարկում են այլ մատչելի ողջ տեղեկատվությունը, որը վերաբերում է.

ռեզիդենտ չիանդիսացող անձի կողմից թույլ տրված՝ սույն Համաձայնագրի խախտումներին եւ նման խախտումների համար նշանակված ցանկացած տուգանքին,

Պայմանավորվող կողմի կողմից իր ռեզիդենտներին խախտումների համար նշանակված տուգանքներին, որոնք թույլ են տրվել Պայմանավորվող կողմի տարածքում:

Լուրջ խախտումների դեպքում նման տեղեկատվությունը պետք է տեղեկություն պարունակի կիրառված տուգանքի մասին:

4. Եթե այլ Պայմանավորվող կողմի տարածքում գրանցված տրանսպորտային միջոցի վարորդի ճանապարհամերձ ստուգումների արդյունքում հայտնաբերվածը հիմք է տալիս հավատալու, որ կատարված խախտումն անհրաժեշտ տվյալների սակավության պատճառով հնարավոր չէ բացահայտել ստուգման միջոցով, ապա շահագրգիռ Պայմանավորվող կողմի իրավասու իշխանություններն աշակցում են միմյանց՝ իրավիճակը պարզաբանելու համար: Այն դեպքում, եթե իրավասու Պայմանավորվող կողմն այդ նպատակով իրականացնում է ձեռնարկության վայրի ստուգում, այդ ստուգման արդյունքներն ուղարկվում են մյուս շահագրգիռ կողմին:

## ՀՈՂՎԱԾ 13. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Նոր՝ 10-րդ, "Յակիչ սարը" հոդվածի դրույթները սույն Յամաձայնագրի Պայմանավորվող կողմերի համար մինչեւ 1995թ. ապրիլի 24-ը պարտադիր բնույթ չեն կրում: Մինչեւ այդ ժամկետը շարունակում են կիրառվել նախկին՝ 12-րդ, "Անհատական հակողության գրքովէկ" հոդվածի եւ նախկին՝ 12- բն "Յակիչ սարը" հոդվածի դրույթները:

## ՀՈՂՎԱԾ 14. ԵՇՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Յամաձայնագիրը բաց է ստորագրման համար մինչեւ 1971թ. մարտի 31-ը եւ այսուհետեւ դրան միանալու համար Եվրոպական տնտեսական հանձնաժողովի անդամ երկրների եւ Յանձնաժողովի մասնատի 8-րդ կետի համաձայն Յանձնաժողովում խորհրդատվական դեր ունեցող երկրների համար:

2. Սույն Յամաձայնագիրը ենթակա է վավերացման:

3. Վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

4. Սույն Յամաձայնագիրն ուժի մեջ է մտնում ութերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հարյուր ութսուն օր անց:

5. Յուրաքանչյուր Պետության համար, որը վավերացնում է սույն Յամաձայնագիրը կամ միանում է դրան սույն հոդվածի 4-րդ կետում նշված ութերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնումից հետո, Յամաձայնագիրն ուժի մեջ է մտնում այդ Պետության կողմից իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնվելուց հարյուր ութսուն օր անց:

## ՀՈՂՎԱԾ 15

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է չեղյալ հայտարարել սույն Յամաձայնագիրը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցմամբ:

2. Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում այդ ծանուցումը Գլխավոր քարտուղարի ստանալու օրվանից վեց ամիս անց:

## ՀՈՂՎԱԾ 16

Սույն Յամաձայնագիրը դադարում է գործել, եթե ուժի մեջ մտնելուց հետո ցանկացած անընդմեջ տասներկու ամիս ժամանակահատվածում Պայմանավորվող կողմերի թիվը պակասում է երեքից:

## ՀՈՂՎԱԾ 17

Յուրաքանչյուր Պետություն սույն Յամաձայնագիրը ստորագրելիս կամ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս կամ դրանից հետո՝ ցանկացած ժամանակ, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին ուղարկված ծանուցմամբ կարող է հայտարարել, որ սույն Յամաձայնագիրը գործողությունը տարածվում է բոլոր կամ որոշ տարածքների վրա, որոնց արտաքին հարաբերությունների համար ինքը պատասխանատվություն է կրում: Յամաձայնագիրը տարածվում է ծանուցման մեջ նշված տարածքի կամ տարածքների վրա վերոնշյալ ծանուցումը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ստանալուց հարյուր ութսուն օր հետո կամ, եթե մինչ այդ օրը Յամաձայնագիրը չի մտել ուժի մեջ, նրա ուժի մեջ մտնելու օրվանից:

2. Յուրաքանչյուր Պետություն, որը, նախորդ կետի համաձայն, հայտարարություն է ներկայացրել այն մասին, որ սույն Յամաձայնագիրը կիրառվում է այն տարածքներում, որոնց արտաքին հարաբերությունների համար ինքը պատասխանատվություն է կրում: Յամաձայնագիրը տարածվում է ծանուցման մեջ նշված տարածքի կամ տարածքների վրա վերոնշյալ ծանուցումը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ստանալուց հարյուր ութսուն օր հետո կամ, եթե մինչ այդ օրը Յամաձայնագիրը չի մտել ուժի մեջ, նրա ուժի մեջ մտնելու օրվանից:

## ՀՐՈՂՎԱԾ 18

1. Երկու կամ ավելի Պայմանավորվող կողմերի միջեւ սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված ցանկացած վեճ հնարավորության սահմաններում լուծվում է նրանց միջեւ բանակցությունների միջոցով:

2. Ցանկացած վեճ, որը չի կարգավորվում բանակցությունների ճանապարհով, ուղարկվում է արքիտրաժային դատարան, եթե վեճի մասնակից հանդիսացող Պայմանավորվող կողմերից մեկը պահանջում է դա, եւ, համապատասխանաբար, հանձնվում է մեկ կամ մի քանի դատավորների, որոնք ընտրվում են վեճի մասնակից կողմերի համաձայնությամբ: Եթե դատավարության պահանջի ներկայացումից հետո՝ երեք ամսվա ընթացքում, վեճի կողմերը չկարողանան համաձայնության գալ միջնորդ դատավորի կամ դատավորների ընտրության հարցում, այդ կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին՝ մեկ դատավոր նշանակելու խնդրանքով, որի որոշմանը կհանձնվի վեճը:

3. Նախորդ կետի համաձայն նշանակված միջնորդ դատավորի կամ դատավորների որոշումը պարտադիր բնույթ է կրում Պայմանավորվող կողմերի համար:

## ՀՐՈՂՎԱԾ 19

1. Ցանկացած Պետություն սույն Համաձայնագրի ստորագրման, վավերացման կամ դրան միանալու ժամանակ կարող է հայտարարել, որ իր համար պարտադիր չի համարում 18-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերը: Սյուն Պայմանավորվող կողմերը պարտավորված չեն նշված կետերով այն բոլոր Պայմանավորվող կողմերի նկատմամբ, որոնք ներկայացրել են այդպիսի հայտարարություն:

2. Եթե վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը հանձնելիս Պետությունը կատարում է, սույն հոդվածի 1-ին կետից բացի, այլ վերապահում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը այդ վերապահման մասին հաղորդում է այն Պետություններին, որոնք միևնույն այդ ի պահ են հանձնել իրենց վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերը եւ դեռեւս չեղյալ չեն հայտարարել սույն Համաձայնագիրը: Վերապահումը համարվում է ընդունված, եթե նշված Պետություններից որեւէ մեկը նման հաղորդագրություն ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, առարկություն չի ներկայացնում այդ վերապահումը ընդունելու վերաբերյալ: Հակառակ դեպքում վերապահումը չի ընդունվում, եւ եթե վերապահում ներկայացրած Պետությունը հետ չի վերցնում այն, Պետության կողմից ի պահ հանձնված վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը ուժի մեջ չի մտնում: Սույն կետի կիրառման նպատակով կանտեսվել այն Պետությունների առարկությունները, որոնք միացել են Համաձայնագրին կամ վավերացրել այն սույն կետը չկիրառելու վերաբերյալ իրենց կողմից արված վերապահումներով:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որի վերապահումը ընդունվել է սույն Համաձայնագրի ստորագրման Արձանագրության մեջ, կամ որը, սույն հոդվածի 1-ին կետի համաձայն, միացել է վերապահումով կամ արել է վերապահում, որն ընդունվել է սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն, ցանկացած պահի կարող է հետ վերցնել վերապահումը՝ այդ մասին ծանուցում ուղարկելով Գլխավոր քարտուղարին:

## ՀՐՈՂՎԱԾ 20

1. Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց երեք տարի անց յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին հասցեագրված ծանուցմամբ խնդրանք ներկայացնել սույն Համաձայնագրի վերասայման համար խորհրդաժողով հրավիրելու մասին: Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին ծանուցում է այդ խնդրանքի մասին եւ հրավիրում է վերասայման համաժողով, եթե Պայմանավորվող կողմերի առնվազն մեկ երրորդը Գլխավոր քարտուղարի ծանուցումը ստանալուց հետո՝ չորս ամսվա ընթացքում, ծանուցում է նրան այդպիսի խնդրանքի՝ իր համաձայնության մասին:

2. Եթե նախորդ կետի համաձայն հրավիրվում է խորհրդաժողով, Գլխավոր քարտուղարը ծանուցում է բոլոր Պայմանավորվող կողմերին եւ նրանց խնդրում եռամսյա ժամկետում ներկայացնել այն առաջարկությունները, որոնք նրանք ցանկանում են քննարկել: Խորհրդաժողովի բացումից առևազն երեք ամիս առաջ Գլխավոր քարտուղարը բոլոր Պայմանավորվող կողմերին ուղարկում է խորհրդաժողովի նախնական օրակարգը այդ առաջարկությունների տեքստի հետ միասին:

3. Գլխավոր քարտուղարը սույն հոդվածի համաձայն գումարված ցանկացած խորհրդաժողովի հրավիրում է սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետում նշված բոլոր մյուս Պետություններին:

## ՀՈԴՎԱԾ 21

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է առաջարկել սույն Համաձայնագրի մեկ կամ մի քանի լրացումներ: Առաջարկվող լրացումների տեքստը հաղորդվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որն այդ մասին հաղորդում է բոլոր Պայմանավորվող կողմերին եւ տեղեկացնում է սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածի 1-ին կետում նշված բոլոր մյուս Պետություններին:

2. Գլխավոր քարտուղարի կողմից հաղորդված առաջարկվող լրացումների ուղարկման օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ Գլխավոր քարտուղարին կարող է տեղեկացնել, որ.

ա) առաջարկություն ունի առաջարկվող լրացման կապակցությամբ, կամ

բ) թե՛ւ մտադիր է ընդունելու առաջարկը, սակայն այն ընդունելու համար անհրաժեշտ պայմանները դեռևս չեն կիրառվում իր Պետությունում:

3. Եթե Պայմանավորվող կողմը Գլխավոր քարտուղարին ուղարկում է սույն հոդվածի 2-րդ կետի "բ" ենթակետում նշված հաղորդագրությունը, նա կարող է, քանի դեռ չի ծանուցել Գլխավոր քարտուղարին առաջարկվող լրացումն ընդունելու մասին, առարկություն ներկայացնել առաջարկվող լրացման վերաբերյալ՝ իր հաղորդման համար նախատեսված վեցամսյա ժամանակահատվածին հաջորդող ինն ամսվա ընթացքում:

4. Եթե առաջարկվող լրացման առարկությունը ներկայացվել է սույն հոդվածի

2-րդ եւ 3-րդ կետերի դրույթների համաձայն, ապա լրացումը համարվում է ընդունված եւ ուժի մեջ չի մտնում:

5. Եթե առաջարկվող լրացման վերաբերյալ սույն հոդվածի 2-րդ եւ 3-րդ կետերի դրույթների համաձայն որեւէ առարկություն չի ստացվել, ապա լրացումը համարվում է ընդունված ստորեւ ներկայացված ժամկետից:

ա) Եթե ոչ մի Պայմանավորվող կողմ հաղորդագրություն չի ուղարկել Գլխավոր քարտուղարին սույն հոդվածի 2-րդ կետի "բ" ենթակետի համաձայն՝ սույն հոդվածի 2-րդ կետում նշված վեցամսյա ժամկետը լրանալու օրվանից,

բ) Եթե Պայմանավորվող կողմերից որեւէ մեկը հաղորդագրություն է ուղարկել Գլխավոր քարտուղարին սույն հոդվածի 2-րդ կետի "բ" ենթակետի համաձայն՝ հետեւյալ երկու ամսաթվերից ավելի վաղ.

- այն օրը, երբ հաղորդագրություն ուղարկած բոլոր Պայմանավորվող կողմերը ծանուցում են Գլխավոր քարտուղարին առաջարկության ընդունման մասին՝ պայմանով, որ Եթե բոլոր ընդունողները ծանուցվել են մինչեւ սույն հոդվածի 2-րդ կետում նշված վեցամսյա ժամկետի լրանալը, ապա այդ օրը պետք է համարվի նշված վեցամսյա ժամկետը լրանալու օր,

- սույն հոդվածի 3-րդ կետում նշված ինն ամսվա ժամանակահատվածի լրանալու օրը:

6. Յուրաքանչյուր ընդունված համարվող լրացում ուժի մեջ է մտնում ընդունվելու օրից երեք ամիս անց:

7. Գլխավոր քարտուղարը հնարավորինս արագ ծանուցում է բոլոր Պայմանավորվող կողմերին ինչպես սույն հոդվածի 2-րդ կետի "ա" ենթակետի համաձայն ստացված առաջարկվող լրացմանը վերաբերող առարկության, այնպես էլ սույն հոդվածի 2-րդ կետի "բ" ենթակետի համաձայն մեկ կամ մի քանի Պայմանավորվող կողմերից ստացված հաղորդագրության մասին: Եթե նա ստացել է նման հաղորդագրություն մեկ կամ մի քանի Պայմանավորվող կողմերից, հետագայում բոլոր Պայմանավորվող կողմերին

տեղեկացնում է հաղորդագրություն ուղարկած Պայմանավորվող կողմի կամ Կողմերի առաջարկվող լրացման առարկելու կամ այն ընդունելու մասին:

8. Անկախ լրացումների ընթացակարգին Վերաբերող սույն հոդվածի 1-6-րդ կետերից՝ սույն Համաձայնագրի հավելվածը փոփոխվում է բոլոր Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների միջեւ ձեռք բերված համաձայնությամբ. Եթե Պայմանավորվող կողմերից մեկի իրավասու մարմինը հայտարարում է, որ, համաձայն իր ազգային օրենքի, իր համաձայնությունը կախված է այս նպատակով հատուկ լիազորումից կամ օրենսդիր մարմին հաստատումից, Պայմանավորվող կողմի իրավասու մարմին համաձայնությունը, կապված հավելվածի փոփոխության հետ, չի համարվում տրված, քանի դեռ նշված իրավասու մարմինը Գլխավոր քարտուղարին չի ծանուցում անհրաժեշտ լիազորումը կամ հաստատումը ձեռք բերելու մասին: Իրավասու մարմինների միջեւ ձեռք բերված համաձայնությամբ նշանակվում է փոփոխված հավելվածի ուժի մեջ մտնելու օրը եւ կարող է սահմանել, որ անցումային շրջանում հին հավելվածը փոփոխված հավելվածի հետ մեկտեղ ամբողջությամբ կամ մասամբ մնում է ուժի մեջ:

## ՀՈԴՎԱԾ 22

1. Սույն Համաձայնագրի հավելվածի 1-ին եւ 2-րդ առդիրները կարող են փոփոխվել սույն հոդվածում նշված ընթացակարգի համաձայն:

2. Պայմանավորվող կողմի իննդրանքով սույն Համաձայնագրի հավելվածի 1-ին եւ 2-րդ առդիրների առաջարկվող փոփոխությունները ուսումնասիրվում են Եվրոպայի տևական հանձնաժողովի Ավտոճանապարհային փոխադրումների հիմնական աշխատանքային խմբի կողմից:

3. Եթե այն ընդունվում է ներկա եւ քվեարկող անդամների մեծամասնության կողմից, եւ եթե այդ մեծամասնությունը ներառում է ներկա եւ քվեարկող Պայմանավորվող կողմերի մեծամասնությունը, փոփոխությունը Գլխավոր քարտուղարի կողմից հաղորդվում է բոլոր Պայմանավորվող կողմերի իրավասու մարմիններին՝ ընդունման համար:

4. Լրացումն ընդունվում է, եթե հաղորդելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների մեկ երրորդից ավելին Գլխավոր քարտուղարին չի ծանուցում փոփոխության վերաբերյալ իր առարկությունների մասին:

5. Յուրաքանչյուր ընդունված փոփոխություն Գլխավոր քարտուղարի կողմից հաղորդվում է բոլոր Պայմանավորվող կողմերին եւ ուժի մեջ է մտնում հաղորդման օրվանից երեք ամիս հետո:

## ՀՈԴՎԱԾ 23

Ի լրումն սույն Համաձայնագրի 20-րդ եւ 21-րդ հոդվածներում նշված ծանուցումների՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը ծանուցում է 14-րդ հոդվածի 1-ին կետում նշված՝

ա) սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածի համաձայն կատարվող վավերացումների եւ նրան միանալու մասին,

բ) 14-րդ հոդվածի համաձայն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ժամկետների մասին,

գ) սույն Համաձայնագրի 15-րդ հոդվածի համաձայն չեղյալ հայտարարումների մասին,

դ) 16-րդ հոդվածի համաձայն սույն Համաձայնագրի դադարեցման մասին,

ե) սույն Համաձայնագրի 17-րդ հոդված համաձայն ստացված ծանուցումների մասին,

զ) սույն Համաձայնագրի 19-րդ հոդվածի համաձայն ստացված հայտարարությունների եւ ծանուցումների մասին:

է) սույն Համաձայնագրի 21-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր լրացման ուժի մեջ մտնելու մասին:

## ՀՈԴՎԱԾ 24

Սույն Համաձայնագրի Ստորագրման արձանագրությունն ունի այս նույն ուժը, վավերականությունը եւ տետողությունը, որն ունի Համաձայնագիրը, որի անբաժանելի մասն է հանդիսանալու այն:

## ՀՈԴՎԱԾ 25

1971թ. մարտի 31-ից հետո սույն Համաձայնագրի բնօրինակն ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին, որը դրա հաստատված օրինակը փոխանցում է 14-րդ հոդվածի 1-ին կետում նշված Պետություններին:

Հավելված. Հսկիչ սարք

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ  
ՏԻՊԱՅԻՆ ՆՄՈՒՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

## ՀՈԴՎԱԾ 1

Հսկիչ սարքի տիպի կամ գրառումների թերթիկի նմուշի հաստատման դիմումը համապատասխան նկարագրությունների հետ միասին արտադրողի կամ նրա գործակալի կողմից ներկայացվում է Պայմանավորվող կողմին: Հսկիչ սարքի տիպին կամ գրառումների թերթիկի նմուշին վերաբերող դիմում չետք է հաստատման ներկայացվի մեկից ավելի Պայմանավորվող կողմի:

## ՀՈԴՎԱԾ 2

Պայմանավորվող կողմը հաստատում է հսկիչ սարքի տիպը կամ գրառումների թերթիկի նմուշը, որը համապատասխանում է սույն լրացման 1-ին հավելվածում սահմանված պահանջներին, պայմանով, որ Պայմանավորվող կողմը պետք է ստուգի այդ արտադրության նմուշների համապատասխանությունը հաստատված տիպային նմուշին:

Հաստատված նմուշի ցանկացած փոփոխություն կամ լրացում պետք է տիպային օրինակի հաստատում ստանա սկզբնական տիպային օրինակը հաստատած Պայմանավորվող կողմի կողմից:

## ՀՈԴՎԱԾ 3

Պայմանավորվող կողմերը դիմում ներկայացնողին տրամադրում են հաստատման նշան, որը համապատասխանում է երկրորդ առդիրում ներկայացված նմուշին հսկիչ սարքի ցանկացած տիպի կամ գրառումների թերթիկի նմուշի համար, որը նրանք հաստատել են 2-րդ հոդվածի համաձայն:

## ՀՈԴՎԱԾ 4

Պայմանավորվող կողմի իրավասու իշխանությունները, որոնց ներկայացվել է տիպային նմուշի հաստատման ձեւը, ցանկացած տիպի հսկիչ սարքի կամ գրառումների թերթիկի նմուշի վերաբերյալ, որը նրանք հաստատել են կամ հրաժարվել են հաստատելուց, մյուս Պայմանավորվող կողմի իշխանություններին մեկ ամսվա ընթացքում ուղարկում են հաստատման հավաստագրի պատճենը՝ դրան կցելով համապատասխան նկարագրությունների պատճենները կամ, կախված հանգամանքներից, ծանուցում են այդ մարմիններին հաստատումից հրաժարվելու մասին. մերժման դեպքում նրանք հաղորդում են կայացրած որոշման պատճառների մասին:

## ՀՐԴՎԱԾ 5

1. Եթե Պայմանավորվող կողմը 2-րդ հոդվածի համաձայն հաստատում է տիպային նմուշը եւ հետագայում պարզում է, որ տիպային նմուշի հաստատման նշանը կրող հսկիչ սարքը կամ գրառումների թերթիկի նմուշը չեն համապատասխանում հաստատված տիպային նմուշին, նա անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար արտադրված մոդելների համապատասխանությունը հաստատված տիպային նմուշին: Ձեռնարկված միջոցները անհրաժեշտության դեպքում կարող են ներառել նաեւ տիպային նմուշի հաստատման անվավեր համարումը:

2. Տիպային նմուշը հաստատած Պայմանավորվող կողմը կարող է անվավեր համարել այդ հաստատումը, եթե հաստատված հսկիչ սարքը կամ գրառումների թերթիկը չի համապատասխանում սույն լրացմանը կամ դրա առդիրներին կամ օգտագործման ժամանակ դրսերում են այնպիսի ընդհանուր թերություն, որն անպիտան է դարձնում այն նպատակների համար, որոնց համար նախատեսված են:

3. Եթե տիպային նմուշը հաստատած Պայմանավորվող կողմը ծանուցում է ստանում մեկ այլ Պայմանավորվող կողմից սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված դեպքերի մասին, ապա նա նույնպես վերջին Պայմանավորվող կողմի հետ խորհրդակցելուց հետո ձեռնարկում է այդ կետերում նշված քայլերը՝ 5-րդ հոդվածի դրույթները պահպանելու պայմանով:

4. Այս Պայմանավորվող կողմը, որը վստահեցնում է, որ ի հայտ է եկել 2-րդ կետում նշված դեպքերից որեւէ մեկը, մինչեւ հետագա ծանուցումը կարող է արգելել հսկիչ սարքի կամ գրառումների թերթիկի շուկա դուրս բերելը եւ շահագործելը: Նույնը կիրառվում է նաեւ 1-ին կետում նշված դեպքերում՝ կապված հսկիչ սարքի կամ գրառումների թերթիկի նախնական ստուգման չենթարկելու հետ, եթե արտադրողը զգուշացվելուց հետո սարքը չի համապատասխանեցնում հաստատված տիպային նմուշին կամ սույն հավելվածի պահանջներին:

5. Ցանկացած դեպքում Պայմանավորվող կողմի իրավասու իշխանությունները մեկամսյա ժամկետում տեղեկացնում են միմյանց 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերի համաձայն տիպային հաստատումը անվավեր համարելու կամ այլ միջոցներ ձեռնարկելու մասին՝ նշելով դրանց պատճառները:

6. Եթե տիպային նմուշը հաստատած Պայմանավորվող կողմը վիճարկում է իրեն ծանուցված 1-ին եւ 2-րդ կետերում նշված դեպքերի առկայությունը, շահագրգիռ Պայմանավորվող կողմերը փորձում են կարգավորել տարածայնությունը:

## ՀՐԴՎԱԾ 6

1. Գրառումների թերթիկի տիպային նմուշի հաստատման համար դիմում ներկայացնողն իր դիմումում հայտարարում է հսկիչ սարքի տեսակի կամ տեսակների մասին, որոնց վրա նախատեսվում է օգտագործել խնդրո առարկա հանդիսացող թերթիկը, եւ այդ տեսակի կամ տեսակների համար տրամադրում է համապատասխան սարքավորում՝ այդ թերթիկները ստուգելու նպատակով:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի իրավասու իշխանությունները գրառումների թերթիկի տիպային նմուշի հաստատման հավաստագրում նշում են հսկիչ սարքի տեսակի կամ տեսակների մասին, որոնց վրա կարող է օգտագործվել այդ թերթիկը:

## ՀՐԴՎԱԾ 7

Ոչ մի Պայմանավորվող կողմ չի կարող հրաժարվել հսկիչ սարք ունեցող ցանկացած փոխադրամիջոցը գրանցելուց կամ արգելել նման փոխադրամիջոցի շահագործումը կամ օգտագործումը որեւէ պատճառով, որը կապված է փոխադրամիջոցում այդ սարքի առկայության փաստի հետ, եթե այդ սարքը կրում է 3-րդ հոդվածում նշված հաստատման նշանը եւ 9-րդ հոդվածում նշված տեղադրման նշանը:

## ՀՐԴՎԱԾ 8

Սույն հավելվածի համաձայն հսկիչ սարքի տիպի կամ գրառումների թերթիկի նմուշի հաստատումը մերժելու կամ անվավեր ճանաչելու մասին կայացված որոշումներում պետք է մասրամասն ներկայացվեն այն պատճառները, որոնց վրա դրանք հիմնված են: Որոշումը հաղորդվում է շահագրգիռ կողմին, որը միեւնույն ժամանակ տեղեկացվում է Պայմանավորվող կողմի օրենքներով սահմանված՝ իր համար մատչելի միջոցների մասին եւ այդ միջոցները կիրառելու ժամկետների մասին:

## II. ՏԵՂԱԴՐՈՒՄ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄ

### ՀՈՂՎԱԾ 9

1. Հսկիչ սարքը կարող է տեղադրվել կամ վերանորոգվել Պայմանավորվող կողմերի իրավասու իշխանությունների կողմից այդ նպատակներով հաստատված տեղադրողների կամ արհեստանոցների կողմից՝ այն բանից հետո, եթե Պայմանավորվող կողմերը ցանկության դեպքում ծանոթացել են շահագրգիռ արտադրողների կարծիքներին:

2. Հաստատված տեղադրողը կամ արհեստանոցը իր կողմից դրված կնիքների վրա տեղադրում է հատուկ նշան: Պայմանավորվող կողմերի իրավասու իշխանությունները հաստատում են օգտագործված նշանների մատյան:

3. Պայմանավորվող կողմերի իրավասու իշխանությունները միմյանց ուղարկում են իրենց կողմից հաստատված տեղադրողների եւ արհեստանոցների ցուցակները, ինչպես նաև օգտագործվող նշանների պատճենները:

4. Սույն հավելվածի պահանջների համաձայն հսկիչ սարքի տեղադրումը հավաստելու նպատակով օգտագործվում է 1-ին հավելվածում նշված տեղադրման նշանը:

## III. ՍԱՐՁԱԿՈՐՄԱՆ ԿԻՐԱԿՈՒՄԸ

### ՀՈՂՎԱԾ 10

Գործատուն եւ վարորդները պատասխանատու են սարքի պատշաճ աշխատանքին հետեւելու համար:

### ՀՈՂՎԱԾ 11

1. Վարորդները չպետք է օգտագործեն կեղտոտ կամ վնասված գրառումների թերթիկներ: Այս առումով թերթիկները պաշտպանվում են համապատասխան կերպով: Գրառումները պարունակող թերթիկի վնասման դեպքում վարորդները կցում են վնասված թերթիկը այն պահեստային թերթիկին, որը փոխարինելու է դրան:

2. Վարորդներն օգտագործում են գրառումների թերթիկները վարելու բոլոր օրերին՝ սկսած այն պահից, եթե նրանք ստանձնում են տրանսպորտային միջոցը վարելու պարտականությունը: Գրառումների թերթիկը չպետք է հանվի մինչեւ աշխատանքային օրվա ժամի ավարտը, եթե դրա հանումը որեւէ կերպ լիազորված չէ: Ցուրաքանչյուր թերթիկ օգտագործվում է միայն դրա համար նախատեսված ժամանակահատվածում:

Եթե տրանսպորտային միջոցից հեռու գտնվելու պատճառով վարորդը չի կարող օգտագործել մերեւնայում հարմարեցված սարք, ժամանակահատվածները նշվում են թերթիկում կամ ծերությունունում՝ պահանջում կամ այլ միջոցներով՝ հստակորեն եւ առանց կեղտոտելու թերթիկը:

Եթե տրանսպորտային միջոցում կան մեկից ավելի վարորդներ, նրանք լրացնում են գրառումների թերթիկը ըստ անհրաժեշտության այնպես, որ 1-ին առդիրի 2-րդ բաժնի 1-3-րդ կետերում նշված տեղեկատվությունը գրառումների թերթիկում գրանցվի այն վարորդի կողմից, որը փաստացի վարում է տրանսպորտային միջոցը:

3. Հսկիչ սարքը նախագծում է այսպես, որ լիազորված վերահսկող պաշտոնյան անհրաժեշտության դեպքում սարքավորումը բացելուց հետո հնարավորություն ունենալի կարդալու ստուգմանը նախորդող ինը ժամկա ընթացքում կատարված գրառումները՝ առանց

ձեւափոխելու, վնասելու կամ կեղտոտելու թերթիկը:

Բացի դրանից՝ հսկիչ սարքը նախագծվում է այնպես, որ հնարավորություն տա առանց պատյանը բացելու ստուգել, որ գրանցումներն իրոք կատարվում են:

4. Հսկողության համար լիազորված պաշտոնյայի պահանջի դեպքում վարորդը պետք է կարողանա ցույց տալ ընթացիկ շաբաթվա գրանցումների թերթիկը եւ, ամեն դեպքում, նախորդ շաբաթվա վերջին օրվա գրանցումները, երբ նա վարել է մեքենան:

### Հավելված. Առջիր 1

#### ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՓՈՐՁԱՐԿՄԱՆ, ՏԵՂԱՐՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՊԱՐԱՍՉԵՐԸ

##### I. ՍՎՐՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն առդիրում.

ա) "հսկիչ սարք" նշանակում է ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրման համար նախատեսված սարքավորում, որն ավտոմատ եւ կիսաավտոմատ կերպով ցույց է տալիս եւ գրանցում է այդ փոխադրամիջոցների շարժման եւ վարորդների աշխատանքային դրոշակի ժամերի մասնամասները,

բ) "գրառումների թերթիկ" նշանակում է գրանցելու եւ պահպանելու համար նախատեսված թերթիկ, որը տեղադրվում է հսկիչ սարքում, եւ որի վրա վերջինիս նշագրման սարքերը կատարում են գրանցման ենթակա տեղեկության շարունակական գրանցում,

գ) "հսկիչ սարքի մշտականություն" նշանակում է թվային բնութագիր, որը ցույց է տալիս մուտքի ազդանշանի արժեքը, որը պահանջվում է ցույց տալ եւ գրանցել անցած 1 կիլոմետր տարածության վրա. այդ մշտականությունը պետք է արտահայտվի կա'մ մեկ կիլոմետրի համար պտույտներով (կ=...պտ/կմ), կա'մ մեկ կիլոմետրի համարի իմպուլսներով (կ=...իմպուլս/կմ),

դ) "տրանսպորտային միջոցի բնութագրող գործակից" նշանակում է թվային բնութագիր, որը ցույց է տալիս ելքի ազդանշանի արժեքը, որն արձակվում է հսկիչ սարքին միացած տրանսպորտային միջոցի մի մասից (տրանսմիսիոն ելքային ծող կամ սունակ), երբ տրանսպորտային միջոցն անցնում է մեկ չափած կիլոմետրը նորմալ փորձարկման պայմաններում (տե՛ս սույն հավելվածի 4-րդ բաժնի 4-րդ կետը): Թվային գործակիցն արտահայտվում է մեկ կիլոմետրի համար պտույտներով ( $W = \text{պտույտ}/\text{կմ}$ ) կամ մեկ կիլոմետրի համար իմպուլսներով ( $W = \dots \text{իմպուլս}/\text{կմ}$ ),

ե) "անվաղողերի արդյունավետ շրջանագիծ" նշանակում է՝ տրանսպորտային միջոցը շարժող մի քանի անիվներով (պտույտ անիվներ) անցած տարածությունների միջինը մեկ ամբողջ պտույտի ժամանակ: Այդ տարածությունների չափումը կատարվում է նորմալ փորձարկման պայմաններում (տե՛ս սույն հավելվածի 4-րդ բաժնի 4-րդ կետը) եւ արտահայտվում է հետեւյալ բանաձեռով.  $1 = \dots \text{մ}:$

##### II. ՀՍԿԻՉ ՍՎՐՋԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸՆԵՐԸ

Հսկիչ սարքը պետք է կարողանա գրանցել հետեւյալը.

1. տրանսպորտային միջոցի անցած տարածությունը,
2. տրանսպորտային միջոցի արագությունը,
3. վարելու ժամանակը,
4. աշխատանքի եւ մատչելիության այլ ժամանակահատվածները,
5. աշխատանքի ընդմիջումները եւ օրական հանգստի ժամանակահատվածները,
6. գրառումների թերթիկը պարունակող տուփի բացումը,
7. ելեկտրոնային հսկիչ սարքի համար, որը տարածության եւ արագության ցուցիչը փոխանցվող ազդանշաններով գործող սարք է, որն ազդարարում է գրանցող սարքում հոսանքի մատակարարման տարածության եւ արագության ցուցիչի 100

միլիվայրկյանը գերազանցող ցանկացած ընդհատում (բացի լուսարձակումից) եւ դեպի տարածության ու արագության ցուցիչ տանող ընդհատումը:

Երկու վարորդների կողմից օգտագործվող փոխադրամիջոցների համար հսկիչ սարքը պետք է հնարավորություն ունենա միաժամանակ եւ պարզորոշ ու երկու առանձին թերթիկների վրա գրանցելու 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերում նշված հատվածները:

### III. ՀԱԿԻՉ ՍԱՐՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՎ ՊԱՐԱՍՉԵՐԸ Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՏԵՐ

1. Հսկիչ սարքը պետք է պարունակի.

ա) տեսանելի սարքավորումներ, որոնք ցույց են տալիս՝

անցած տարածությունը (տարածության գրանցիչ),

արագությունը (արագաչափ),

ժամանակը (ժամացույց),

բ) ձայնագրող սարքեր, որոնք բաղկացած են՝

անցած տարածության գրանցիչից,

արագության գրանցիչից,

մեկ կամ ավելի ժամանակի գրանցիչներից, որոնք բավարարում են 3-րդ բաժնի "գ"

4 կետում նշված պահանջներին,

գ) նշագրման միջոցներ, որոնք գրանցման թերթիկի վրա առանձին ցույց են տալիս՝

թերթիկը պարունակող պատյանի յուրաքանչյուր բացում,

Ելեկտրոնային հսկիչ սարքի համար, ինչպես նշված է 2-րդ բաժնի 7-րդ կետում, հսկիչ սարքի հոսանքի մատակարարման 100 միլիվայրկյանը գերազանցող ցանկացած ընդհատում (բացի լուսարձակումից) ոչ ուշ, քան հոսանքի մատակարարման վերսկսումը,

Ելեկտրոնային հսկիչ սարքի համար, ինչպես նշված է 2-րդ գլխի 7-րդ կետում, գրանցող սարքում հոսանքի մատակարարման տարածության եւ արագության ցուցիչի 100 միլիվայրկյանը գերազանցող ցանկացած ընդհատում (բացի լուսարձակումից) եւ դեպի տարածության եւ արագության ցուցիչ տանող ընդհատում:

2. Վերը նշված սարքերում որեւէ այլ լրացուցիչ սարքավորման ներառումը չպետք

Ե խոչընդոտի պարտադիր սարքերի պատշաճ գործունեությունը կամ դրանց ընթերցումը:

Հսկիչ սարքը պետք է ներկայացվի հաստատման ցանկացած այդպիսի լրացուցիչ սարքի հետ միասին:

3. Նյութերը

ա) Հսկիչ սարքի բոլոր բաղադրյալ մասերը պետք է պատրաստված լինեն համապատասխան կայունություն ունեցող, մեխանիկական ամրությամբ, կայուն Ելեկտրական եւ մագնիսական հատկություններով օժտված նյութերից:

բ) Հսկիչ սարքի բաղադրյալ մասերի կամ դրա արտադրության համար օգտագործվող նյութերի հատկությունների ցանկացած փոփոխություն, միևնույն արտադրության մեջ կիրառվելը, պետք է հաստատման ներկայացվի հսկիչ սարքի տիպային նմուշի հաստատումը շնորհող իրավասու իշխանությանը:

4. Անցած տարածության չափումը

Անցած տարածությունը կարող է չափվել եւ գրանցվել հետեւյալ տարբերակներով.

որպեսզի ներառվեն առաջընթաց եւ հետընթաց շարժումները, կամ

որպեսզի ներառվի միայն առաջընթաց շարժումը.

հետընթաց շարժումների ցանկացած գրանցում չպետք է ոչ մի դեպքում ազդի մյուս գրանցումների հստակության եւ ճշգրտության վրա:

5. Արագության չափումը

ա) Արագության չափման շրջանը պետք է համապատասխանի տիպային նմուշի հաստատման հավաստագրում նշվածին,

բ) թնական հաճախության եւ չափի սարքի արգելակումը պետք է լինի այնպիսին, որ արագությունը ցուցադրող եւ գրանցող սարքավորումները կարողանան չափման տիրույթի շրջանակներում հետեւել արագության փոփոխություններին միևնույն միջակա հնարավոր թույլատրելի սահմաններում:

## 6. Ժամանակի չափումը (ժամացույց)

ա) Ժամացույցը գրոյական վիճակի բերող սարքավորման հսկիչը տեղադրվում է գրանցման թերթիկը պարունակող պատյանի ներսում. այդ պատյանի ցանկացած բացում ինքնարերաբար նշվում է գրանցման թերթիկում:

բ) Եթե գրանցման թերթիկի առաջընթաց շարժի սարքավորումը վերահսկվում է ժամացույցով, ապա այն ժամանակահատվածը, որի ընթացքում վերջինս լիովին վնասված լինելուց հետո կական ճշգրտորեն աշխատել, պետք է առնվազն 10%-ով ավել լինի սարքավորման թերթիկների լիցքավորման գրանցումների ժամանակահատվածին համապատասխանող գրանցման ժամանակահատվածից:

## 7. Լուսարձակում եւ պաշտպանում

ա) Հսկիչ սարքի տեսողական սարքերը պետք է ապահովվեն համապատասխան չկուրացնող լուսարձակմամբ:

բ) Օգտագործման նորմալ պայմաններում հսկիչ սարքի բոլոր ներքին մասերը պետք է պաշտպանված լինեն խոնավությունից եւ փոշուց: Ի լրումն՝ դրանք պետք է պաշտպանված լինեն միջամտությունից ծածկոցներով, որոնք հնարավոր են կարել:

## Բ. ՏԵՍՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

### 1. Անցած տարածության ցուցիչ (տարածության գրանցիչ)

ա) Անցած ճանապարհը ցույց տվող հսկիչ սարքի ամենափրկ մասնաբաժինը պետք է լինի 0.1 կմ-ը: Յեկտոմետրերը ցույց տվող նշանները պետք է հստակ կերպով տարբերվեն ամբողջական կիլոմետրերը ցույց տվող նշաններից:

բ) Տարածության գրանցիչի նշանները պետք է լինեն հստակ եւ ուսենան տեսանելի բարձրություն առնվազն 4 մմ չափով:

գ) Տարածության գրանցման ցուցիչը պետք է ընթեռնելի լինի առնվազն մինչեւ 99 999, 9 կմ:

### 2. Արագության ցուցիչներ (արագաչափ)

ա) Չափումների տիրույթում արագության սանդղակը պետք է միանման կերպով բաշխվի ժամում 1, 2, 5 կամ 10 կմ ցուցանշաններով: Վրագությունների բաշխման արժեքը (իրար հաջորդող նշանների միջեւ ընկած տարածությունը) չպետք է գերազանցի սանդղակի վրա ցուցադրվող առավելագույն արագության 10 %-ը:

բ) Սահմանված տիրույթից դուրս ընկած մասը թվերով նշելու կարիք չկա:

գ) 10 կմ/ժ արագության տարբերությունը ներկայացնող սանդղակի յուրաքանչյուր հատվածի երկարությունը չպետք է պակաս լինի 10 մմ-ից:

դ) Սլաքով ցուցիչի վրա սլաքի եւ հսկիչ սարքի մակերեւութի միջեւ ընկած տարածությունը չպետք է գերազանցի 3 մմ-ը:

### 3. Ժամանակի ցուցիչ (ժամացույց)

Ժամանակի ցուցիչը պետք է տեսանելի լինի հսկիչ սարքի արտաքին կողմից եւ ապահովի հստակ, պարզ եւ ոչ երկիմաստ ընթեռնելիություն:

-----  
ԻՐՏԵԿ - շարունակությունը հաջորդ մասում

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԳՅԱՅՆԱԳԻՐ

ՄԻՋԱՇԳԱՅԻՆ ԱՎՏՈՃԱՆԱԿՐԱՎՅԱՅՆ ՓՈԽՎՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ՏՐԱՍՄՊՈՐՏԱՅԻՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՁԱԿԱՎՄԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(AETR)

(2-րդ մաս)

## Գ. ԶԱՅՆԱԳՐՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ

### 1. Ընդհանուր կետեր

ա) Բոլոր սարքավորումները, անկախ գրանցման թերթիկի ձեւից (ժապավեն կամ սկավառակ), պետք է նշան կրեն, որը թույլ կտա ճիշտ կերպով տեղադրել գրանցման թերթիկի վերահսկումը:

թերթիկը, այսպես, որ ապահովվի ժամացույցի ցույց տված ժամանակի եւ թերթիկի վրա ցույց տրվող ժամանակի համապատասխանությունը:

բ) Գրառումների թերթիկը շարժող սարքավորումը պետք է այսպիսին լինի, որ ապահովվի տառերի առանց տատանման շարժումը եւ դրանք հեշտությամբ հանելու ու տեղադրելու հնարավորությունը:

գ) Սկավառակի ձեռվ գրառումների թերթիկի առաջ շարժելու սարքը պետք է վերահսկվի ժամացույցի մեխանիզմով: Այդ դեպքում թերթիկի պտտեցման շարժումը պետք է լինի շարունակական եւ միօրինակ՝ 7 մմ/ժամ նվազագույն արագությամբ՝ հաշված արագության գրանցման տիրույթի եզրագծի զանգի նշման վերջին սահմանից:

Ժապավեսի ձեռվ սարքավորման մեջ, որում թերթիկների առաջընթաց շարժման սարքը հսկվում է ժամացույցով, ուղղաձիգ առաջ շարժվելու արագությունը պետք է լինի առնվազն 10 մմ մեկ ժամում:

դ) Անցած տարածության, փոխադրամիջոցի արագության եւ գրառումների թերթիկը կամ թերթիկները պարունակող պատյանի ցանկացած բացման գրանցումը պետք է կատարվի ավտոմատ կերպով:

## 2. Անցած տարածության գրանցումը

ա) Անցած տարածության յուրաքանչյուր կիլոմետրը պետք է արտացոլվի գրանցման մեջ՝ համապատասխան կոորդինատի համար առնվազն 1 մմ տատանումով:

բ) Անգամ այն դեպքում, եթե արագությունը հասնում է չափման տիրույթի գագաթնակետին, տարածությունների գրանցումը միշտ պետք է հստակ լինի:

## 3. Արագության գրանցում

ա) Անկախ գրանցման թերթիկի ձեւից՝ արագության գրանցման սլաքը պետք է սովորաբար շարժվի ուղիղ գծով եւ գրանցման թերթիկի ուղեւորության ուղղության աջ անկյուններով:

Այսուհետև սարքի սլաքը կարող է լինել թեք գծով՝ ապահովելով հետեւյալ պայմանների առկայությունը.

Սլաքի թողած հետքերը պետք է լինեն ուղղահայաց արագության գրառումների համար նախատեսված տիրույթի միջին շրջանագծին (սկավառակի ձեռվ թերթիկների դեպքում) կամ առանցքին (ժապավեսի ձեռվ թերթիկների դեպքում),

Սլաքի կողմից պատկերված կորագծի շառավիդի եւ արագության գրառումների համար նախատեսված տիրույթի միջեւ եղած հարաբերակցությունը պետք է լինի առնվազն 2.4-ը 1-ի հարաբերակցությամբ՝ անկախ գրառումների թերթիկի ձեւից,

Ժամանակացույցի վրա կատարված նշանները պետք է հատեն գրառումների տիրույթը միեւնույն շառավիդու ունեցող կորով, որը հետագծվել է սլաքի կողմից:

Ժամանակացույցի վրա նշումների միջեւ ընկած տարածությունը պետք է ներկայացնի 1 ժամը չգերազանցող ժամանակահատված:

բ) 10 կմ/ժ արագության յուրաքանչյուր փոփոխություն պետք է ներկայացվի գրառման մեջ առնվազն 1.5 միլիմետր տատանմամբ համապատասխան կոորդինատում:

## 4. Ժամանակի գրանցումը

ա) Հսկիչ սարքը պետք է պատրաստված լինի այսպես, որ վարելու ժամանակահատվածը միշտ ինքնարերաբար կերպով գրանցվի, եւ հնարավոր լինի անհրաժեշտության դեպքում առանձին ներկայացնել այլ ժամանակահատվածները՝ հետեւյալ կերպով.

I. Նշանի տակ՝ վարելու ժամանակը,

II. Նշանի տակ՝ մյուս բոլոր աշխատանքային ժամանակահատվածները,

III. Նշանի տակ՝ մատչելիության այլ ժամանակահատվածները, որոնք են՝

սպասելու ժամանակը, այսինքն՝ այն ժամանակահատվածը, որի ընթացքում վարորդները պետք է մնան իրենց տեղերում՝ զանգերին պատասխանելու համար,

համաձայն որոնց նրանք պետք է սկսեն կամ վերսկսեն վարելը կամ իրականացնեն այլ աշխատանք,

Վարորդի կողքին անցկացրած ժամանակը, երբ մերենան գտնվում է ընթացքի մեջ,  
ՆՆՉԱՀՈՂՈՎ անցկացրած ժամանակը, երբ մերենան գտնվում է ընթացքի մեջ,

IV. Նշանի տակ՝ աշխատանքային ընդմիջումները եւ ամենօրյա հանգստի  
ժամանակահատվածները:

#### ԻՐՏԵԿ - Նշանները չեն բերվում

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է թույլատրել վերոնշյալ II եւ III  
Ենթակետերում Նշված ժամանակահատվածների մասին իր տարածքում գրանցված  
տրանսպորտային միջոցների վրա օգտագործվող գրառումների թերթիկների վրա կատարել  
համապատասխան գրառումներ՝ ըստ իր նշանների:

բ) Նետագծերի բնութագրիներից, դրանց հարաբերական դիրքից եւ,  
անհրաժեշտության դեպքում, նաեւ 4-րդ "ա" կետում Նշված Նշաններով պետք է  
հնարավոր լինի հստակ առանձնացնել տարբեր ժամերի միջեւ ընկած  
ժամանակահատվածները:

Տարբեր ժամանակահատվածները պետք է գրառումների վրա միմյանցից տարբերակվեն  
համապատասխան հետագծերի հաստությամբ կամ ցանկացած այլ միջոցով, որը գրառման  
պարզության եւ մեկնաբանման առումով ունի նույն արդյունավետությունը:

գ) Մեկից ավելի վարորդներից բաղկացած տրանսպորտային միջոցների դեպքում  
4-րդ "ա" կետով նախատեսված գրառումները պետք է կատարվեն առանձին թերթիկների  
վրա՝ յուրաքանչյուր թերթիկը հատկացնելով մեկ վարորդի: Այս դեպքում առանձին  
թերթիկների առաջընթաց շարժումը կատարվում է մեկ մեխանիզմի կամ առանձին  
համաժամանակային մեխանիզմների միջոցով:

#### Դ. ՓԱԿԻՉ ՍԱՐՔ

1. Գրառումների թերթիկը կամ թերթիկները եւ ժամացույցը գրոյական վիճակի  
բերելու մեխանիզմները պարունակող պատյանը պետք է փակված լինի կողաքեռով:

2. Գրառումների թերթիկը կամ թերթիկները եւ ժամացույցը գրոյական վիճակի  
բերելու մեխանիզմները պարունակող պատյանի յուրաքանչյուր բացում պետք է  
ինքնաբերաբար գրանցվի թերթիկի կամ թերթիկների վրա:

#### Ե. ՆՃՈՒՄՆԵՐ

1. Նաև սարքի գործիքի արտաքին մասում պետք է հայտնվեն հետեւյալ  
Նշումները:

տարածության գրանցիչի կողմից ցույց տրվող թվի մոտ՝ տարածության չափման  
միավորը՝ Նշված "կմ" հապավումով,

արագությունների սանդղակի մոտ՝ "կմ/ժ" Նշանով,  
արագաչափի չափման տիրուպյթը՝ "Վմին ... կմ/ժ, Վմաքս ... կմ/ժ" ձեւով: Այս  
Նշումներն անհրաժեշտ չեն, եթե դրանք ցույց են տրված սարքավորման նկարագրման  
հարթակի վրա:

Այնուամենայնիվ, այս պահանջները չեն գործում մինչեւ 1970թ. օգոստոսի 10-ը  
հաստատված հսկիչ սարքերի համար:

2. Նկարագրման հարթակը պետք է կառուցված լինի սարքավորման մեջ եւ ցույց տա  
հետեւյալ Նշանները, որոնք պետք է տեսանելի լինեն տեղադրված հսկիչ սարքի վրա.

սարքավորումն արտադրողի անվանումը եւ հասցեն,  
արտադրողի համարը եւ կառուցման տարեթիվը,  
հսկիչ սարքի տեսակի հաստատման Նշանը,  
սարքավորման մշտականությունը՝ "կ=...պտույտ/կմ" կամ "կ=...իմպուլս/կմ"  
ձեւով,

որպես այլընտրանք՝ արագության չափման տիրույթը՝ 1-ին կետում նշված ձեւով,  
եթե թեքման անկյունի գգայունության գործիքը կարող է ազդել թույլատրելի  
սահմաններից դրւու սարքավորման կողմից տրվող ցուցմունքների ընթեռնելիության  
վրա, թույլատրելի անկյունը նկարագրվում է որպես.

+b  
/  
/a -y  
/\_

որտեղ ա-ն այս անկյունն է, որը չափվել է սարքավորման արտաքին մասից՝  
հորիզոնական դիրքում (հարմարեցված ճիշտ ձեւով), որի համար չափվում է գործիքը,  
իսկ բ-ն եւ յ-ը ներկայացնում են չափման անկյունից առավելագույն թույլատրելի  
վերեւ եւ ներքեւ թեքումները:

## 2. ԹՌՒՅԼԱՏՐԵԼԻ ԿՈՂՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՐՄԱՆՆԵՐԸ (ՏԵՍՈՂԱԿԱՆ ԵՎ ԶԱՅՆԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ)

### 1. Փորձարկման վայրում մինչեւ տեղադրումը.

ա) անցած տարածությունը.

իրական տարածությունից 1% ավել կամ պակաս, երբ տարածությունը առնվազն 1  
կմ է,

բ) արագություն.

իրական արագությունից 3 կմ/ժ ավելի կամ պակաս,

գ) ժամանակ.

օրական երկու րոպե. յոթ օրվա համար առավելագույնը 10 րոպե՝ այս դեպքերում,  
երբ ժամացուցի աշխատելու ժամանակահատվածը հետ տալուց հետո քիչ չէ այդ  
ժամանակահատվածից:

### 2. Տեղադրման ժամանակ.

ա) անցած տարածությունը.

իրական տարածությունից 2% ավել կամ պակաս, երբ հեռավորությունը կազմում է  
առնվազն 1 կիլոմետր,

բ) արագությունը.

իրական արագությունից 4 կմ/ժ ավել կամ պակաս,

գ) ժամանակը.

- օրական երկու րոպե կամ

- 10 րոպե յուրաքանչյուր յոթ օրը:

### 3. Օգտագործման ժամանակ.

ա) անցած տարածությունը.

իրական տարածությունից 4% ավել կամ պակաս, երբ հեռավորությունը կազմում է  
առնվազն 1 կիլոմետր.

բ) արագությունը.

իրական արագությունից 6 կմ/ժ ավել կամ պակաս,

գ) ժամանակը.

- օրական երկու րոպե,

- 10 րոպե յուրաքանչյուր յոթ օրը:

4. 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերում նշված առավելագույն թույլատրելի  
սահմանները գործում են ըստ ՑԵԼՍՀՈՒՍԻ 0-ից մինչեւ 40 շերմաստիճանի դեպքում՝  
սարքավորմանն առավել մոտ շերմաստիճաններով:

5. 2-րդ եւ 3-րդ կետերում նշված առավելագույն թույլատրելի սահմանների  
չափումն իրականացվում է IV գլխում նշված պայմանների դեպքում:

## IV. ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԸ

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՏԵՐ

1. Գրանցման թերթիկները պետք է լինեն այնպիսին, որ չխոչընդոտեն սարքավորման նորմալ աշխատանքը, եւ դրանց մեջ պարունակվող գրանցումները լինեն անջնջելի, հստակ եւ ճանաչելի:

Գրանցման թերթիկները պետք է պահպանեն իրենց չափսերը եւ խոնավության ու շերմաստիճանի նորմալ պայմաններում իրենց վրա արված ցանկացած գրառում:

Ի լրումն. անձնակազմի յուրաքանչյուր անդամ պետք է, առանց թերթիկները վնասելու եւ կատարված գրանցումների ընթեռնելիության վրա ազդելու, հնարավորություն ունենա գրանցման թերթիկներում լրացնել հետեւյալ տեղեկատվությունը.

ա) թերթիկի օգտագործումը սկսելիս՝ իր ազգանունը եւ անունը,

բ) թերթիկի օգտագործումն սկսելու ամսաթիվը ու վայրը եւ օգտագործման ավարտի ամսաթիվն ու վայրը,

գ) իրեն Վստահված յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի գրանցման համարը՝ գրանցելով այն թերթիկի վրա առաջին ուղեւորության սկզբին եւ այսուհետեւ, տրանսպորտային միջոցի փոփոխման դեպքում, թերթիկի օգտագործման ընթացքում,

դ) վագրի ցուցիչի գրառումը.

թերթիկի վրա գրանցված առաջին ուղեւորության սկզբին,

թերթիկի վրա գրանցված վերջին ուղեւորության վերջում,

աշխատանքային օրվա ընթացքում մեքենայի փոփոխության դեպքում (իրեն Վստահված տրանսպորտային միջոցի ցուցմունքը եւ իրենց վստահվելիք տրանսպորտային միջոցի ցուցմունքը),

ե) մեքենայի ցանկացած փոփոխության ժամանակը:

Պահպանման նորմալ պայմաններում առնվազն մեկ տարի գրանցումները պետք է մնան հստակ ընթեռնելի:

2. Թերթիկների նվազագույն գրանցման հնարավորությունը պետք է լինի 24 ժամ՝ անկախ դրանց ձևից:

Եթե տարբեր սկավառակներ միմյանց հետ կապակցված են շարունակական գրանցումների ծավալը մեծացնելու նպատակով, որին կարելի է հասնել առանց անձնակազմի միջամտության, տարբեր սկավառակների միջեւ կապակցումը կատարվում է այսպես, որ մեկ սկավառակից մյուսին փոխանցվելիս գրանցումների մեջ չինեն ընդհատումներ կամ խախտումներ:

## Բ. ԶԱՅՆԱԳՐՈՒՄՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԿԻԱՑՈՒՄԸ

1. Գրանցման թերթիկներն ընդգրկում են հետեւյալ գրանցումների տիրույթները.

այն տիրույթը, որը բացառապես նախատեսված է արագությանը վերաբերող տվյալների համար,

այն տիրույթը, որը բացառապես նախատեսված է ուղեւորության տարածությանը վերաբերող տվյալների համար,

մեկ կամ ավելի տիրույթներ՝ վարման ժամանակին, այլ աշխատանքային ժամանակահատվածներին, աշխատանքային ընդմիջումներին եւ վարորդների հանգստի ժամերին վերաբերող տվյալների համար:

2. Վրագության վերաբերյալ գրանցումների տիրույթը պետք է հավասարաչափ բաժանված լինի յուրաքանչյուր ժամկա համար 20 կմ կամ քիչ բաժիններով:

Սանդղակում կատարված արագությանը համապատասխանող ցանկացած նշում պետք է նշման

դիմաց ցույց տրվի թվերով: "Կմ/ժ" խորհրդանշանն առնվազն մեկ անգամ պետք է ցույց տրվի տիրույթում: Սանդղակի վերջին նշումը պետք է համապատասխանի չափման վերին շարքին:

3. Անցած տարածության մասին գրառումների տիրույթը պետք է կազմվի այսպես, որ բոլոր կիլոմետրերի քանակը ընթեռնելի լինի առանց որեւէ դժվարության:

4. 1-ին կետում նշված ժամանակահատվածների մասին գրանցումների համար վերապահված տիրույթը կամ տիրույթները նշվում են այսպես, որ հնարավոր լինի հստակ տարանջատել տարբեր ժամանակահատվածները:

#### Գ. ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԵԼԻՇ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր թերթիկ պետք է տպագիր ծերով պարունակի հետեւյալ տեղեկատվությունը.

արտադրողի անվանումը եւ հասցեն կամ առեւտրային անվանումը,  
թերթիկի տիպային նմուշի հաստատման նշանը,

հսկիչ սարքերի տեսակի կամ տեսակների հաստատման նշանը, որում պետք է օգտագործվի թերթիկը,

արագության չափման տիրույթի վերին մակարդակը՝ տպագրված կիլոմետր-ժամով:

Նվազագույն հավելյալ պահանջների միջոցով յուրաքանչյուր թերթիկ պետք է տպագիր ծերով պարունակի այնպես բաշխված ժամանակացույց, որ ժամանակը ուղղակիորեն կարդացվի 15 րոպեանոց դադարներով, եւ յուրաքանչյուր 5 րոպեանոց դադար հնարավոր լինի որոշել առանց դժվարության:

#### Դ. ԱՉԱՏ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԶԵՌԱԳԻՐ ՄԵՋԲԵՐՈՒՄԸ ԵՐԻ ՀԱՍԱՐ

Թերթիկներում պետք է հատկացվեն այնպիսի ազատ տարածություններ, որոնք վարորդներին հնարավորություն կտան լրացնելու առնվազն հետեւյալ տվյալները.

Վարորդի ազգանունը եւ անունը,

թերթիկի օգտագործումն սկսելու ամսաթիվը եւ վայրը եւ այդպիսի օգտագործման ավարտի ամսաթիվը եւ վայրը,

այն տրանսպորտային միջոցի կամ տրանսպորտային միջոցների գրանցման համարը կամ համարները, որոնց կցված է վարորդը թերթիկն օգտագործելու ընթացքում,

այն տրանսպորտային միջոցի կամ տրանսպորտային միջոցների վազքի ցուցիչի տվյալները, որոնց կցված է վարորդը թերթիկն օգտագործելու ընթացքում,

տրանսպորտային միջոցի ցանկացած փոխարինման ժամանակը:

#### Վ. ՀԱԿԻՉ ՍԱՐՁԻ ՏԵՂԱՐՐՈՒՄԸ

##### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՏԵՐ

1. Հակիչ սարքը տրանսպորտային միջոցում պետք է տեղակայվի այնպես, որ վարորդն իր նստելատեղից հստակ տեսնի արագության ցուցիչը, տարածությունը գրանցող սարքը եւ ժամացույցը. միևնույն ժամանակ այս գործիքների բոլոր մասերը, ներառյալ վարելու մասերը, պետք է պաշտպանվեն պատահարային վնասումից:

2. Պետք է հնարավոր լինի հարմարեցնել հսկիչ սարքի մշտականությունը տրանսպորտային միջոցի գործակցային բնութագրիչներին դրա համար նախատեսված սարքի միջոցով, որը կրում է հարմարեցուցիչ անվանումը:

Այն տրանսպորտային միջոցները, որոնք ունեն երկու կամ ավելի կողային սղնիների հարաբերակցություն, պետք է միացնող սարքով հարմարեցվեն այն մասում, որտեղ այս տարբեր հարաբերակցությունները կարող են բերվել մեկ ուղղության վրա՝ այնպիսի հարաբերակցությամբ, որի համար հսկիչ սարքը հարմարեցվել է մեքենայի վրա:

3. Տեղադրման ժամանակ հսկիչ սարքը ստուգելուց հետո տեղադրման հարթակը պետք է ամրացվի տրանսպորտային միջոցում՝ հսկիչ սարքի մոտ, կամ հենց սարքի մեջ, եւ տեղադրվի այնպես, որ հստակ տեսանելի լինի: Հաստատված տեղադրողի կամ արհեստանոցի կողմից յուրաքանչյուր ստուգումից հետո, որը պահանջում է տեղադրման փոփոխություն, նախկին հարթակի փոխարեն պետք է տեղադրվի նորը:

Հարթակի վրա պետք է երեւան առնվազն հետեւյալ տվյալները.

հաստատված տեղադրողի կամ արհեստանոցի անունը, հասցեն կամ առեւտրային անունը,

տրանսպորտային միջոցի բնութագրային գործակիցը՝ "w = ... րեվ/կմ" կամ "w = ... իմք/կմ" ձեւով,

անվադողերի արդյունավետ ծածկույթը՝ "i = .... մմ" ձեւով,

մեքենայի բնութագրիչների գործակիցի եւ անվադողերի արդյունավետ ծածկույթի որոշման ամսաթվերը:

## Բ. ԿԱԶՈՒՄԸ

Հետեւյալ մասերը պետք է կնքվեն.

ա) տեղադրման հարթակը, եթե տեղադրված չէ այնպես, որ այն շարժելիս կարող են խախտվել դրա վրա կատարված նշումները,

բ) հսկիչ սարքի հիմքը եւ տրանսպորտային միջոցը կապող շղթայի երկու ծայրերը,

գ) հարմարեցուցիչը եւ դրա՝ անցքի մեջ մտցվելու տեղը,

դ) երկու կամ ավել սուսիների հարաբերակցությամբ տրանսպորտային միջոցի միացման մեխանիզմը,

ե) հարմարեցուցիչը եւ միացման մեխանիզմը հսկիչ սարքի մնացած մասին միացնող կապակցման մասերը,

զ) 3-րդ գլխի Ա.7.ք կետով նախատեսված ծածկոցները:

Մասնակի դեպքերում կարող են պահանջվել հավելյալ կնիքներ հսկիչ սարքի տեսակի հաստատման վրա, եւ այս կնիքների տեղադրման մասին պետք է նշվի հաստատման հավաստագրում:

Արտակարգ իրավիճակներում կարող են խախտվել միայն "բ", "գ" եւ "ե" կետերում նշված կնիքները. կնիքների խախտման ցանկացած դեպքում պետք է նախապատրաստվի եւ իրավասու իշխանություններին ներկայացվի այդպիսի խախտման պատճառները նշող գրավոր դիմում:

## VI. ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պայմանավորվող կողմը պետք է նշանակի այն մարմիններին, որոնք պետք է իրականացնեն ստուգումները եւ տեսչությունները:

### 1. Նոր կամ վերանորոգված գործիքների հավաստագրումը

Ցանկացած առանձին սարք, լինի նոր կամ վերանորոգված, պատշաճ կիրառման եւ ցուցմունքների ու գրանցումների ճշտության առումով պետք է հավաստագրվի 3-րդ գլխի 2.1 կետի սահմանափակումների շրջանակներում՝ կնքվելով ըստ 5-րդ գլխի Բ.գ կետի:

Այս սպատակով Պայմանավորվող կողմը պետք է իրականացնի նախնական տեսչություն, որը բաղկացած է նոր կամ վերանորոգված սարքի ստուգումից եւ հաստատված նմուշի հետ եւ/կամ սույն հավելվածների եւ դրանց առդիրների պահանջների հետ համապատասխանության հաստատումից, կամ կարող է հավաստման իրավունքը փոխանցվել արտադրողներին կամ նրանց լիազոր գործակալներին:

### 2. Տեղադրումը

Տրանսպորտային միջոցի վրա տեղադրվելիս հսկիչ սարքը եւ ողջ տեղադրումը պետք է համապատասխանեն 3-րդ գլխի 2.2 կետում նշված առավելագույն թույլատրելի սահմաններին վերաբերող դրույթներին:

Տեսչության փորձարկումները պետք է իրականացվեն հաստատված տեղադրողի կամ արհեստանոցի կողմից՝ նրանց պատասխանատվությամբ:

### 3. Պարբերաբար անցկացվող տեսչություններ

ա) Տրանսպորտային միջոցի վրա հարմարեցված հսկիչ սարքի պարբերաբար տեսչությունները պետք է անցկացվեն առևազան յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ եւ պետք է իրականացվեն ըստ տրանսպորտային միջոցների՝ ավտոճանապարհի համար պիտանիության փորձարկումների:

Այս ստուգայցերը պետք է ընդգրկեն հետեւյալ ստուգումները.

որ հսկիչ սարքը հստակ աշխատում է,

որ հսկիչ սարքը կրում է տիպային նմուշի հաստատման նշան,  
որ տեղակայման հարթակը ամրացված է,  
որ հսկիչ սարքի եւ տեղադրման այլ մասերում գտնվող կնիքները անխախտ  
վիճակում են,

անվադողների իրական ծածկույթը:

թ) Առավելագույն թույլատրելի սահմաններին վերաբերող՝ 3-րդ գլխի 2.3 կետում  
նշված դրույթներին համապատասխանեցումն ապահովելու նպատակով կատարվող  
տեսչությունը իրականացվում է առևկազն վեց տարին մեկ անգամ՝ չնայած այն  
հանգամանքին, որ յուրաքանչյուր Պայմանագործող կողմ նման տեսչության համար  
կարող է սահմանել ավելի կարճ ժամանակահատված իր տարածքում գրանցված  
տրանսպորտային միջոցների համար: Այսպիսի ստուգայցերը պետք է ներառեն  
տեղակայման հարթակների փոխարինումը:

#### 4. Սխալների չափումը

Տեղադրման եւ օգտագործման ընթացքում սխալների չափումն իրականացվում է  
հետեւյալ պայմանների ներքո, որոնք պետք է համարվեն որպես սահմանված ստանդարտ  
փորձարկման պայմաններ.

չբեռնավորված մեքենան՝ նորմալ աշխատող վիճակում,

անվադողների ճնշումը՝ համաձայն արտադրողի կողմից տրված իրահանգների,

անվադողների ծածկույթը՝ համաձայն օրենքով թույլատրելի սահմանների,

մեքենայի շարժունակությունը. մեքենան պետք է ընթանա իր շարժիչի միջոցով,  
ուղիղ գծով կայուն մակերեւույթի վրա՝ 50.5 կմ/ժ արագությամբ. պայմանով, որ դա  
համեմատական ճշգրտություն է, փորձարկումը կարելի է իրականացնել նաեւ  
համապատասխան փորձարկման վայրում:

#### 3. Յավելված - Առջիր 2

#### ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՇԱՆԸ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԳԻՐԸ

##### I. ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՇԱՆԸ

###### 1. Յաստատման նշանը պետք է բաղկացած լինի.

Ուղղանկյունից, որի մեջ պետք է տեղադրված լինի "e" տառը, որին պետք է  
հաջորդի հաստատումը շնորհած երկրի տարբերակող թիվը՝ համաձայն հետեւյալ  
պայմանական նշանների.

Գերմանիա	- 1	Ռումինիա	- 19
Ֆրանսիա	- 2	Լեհաստան	- 20
Իտալիա	- 3	Պորտուգալիա	- 21
Նիդերլանդներ	- 4	Ռուսաստանի Դաշնություն	- 22
Ճվեդիա	- 5	Հունաստան	- 23
Բելգիա	- 6	Իռլանդիա	- 24
Չեխիայի Յանրապետություն	- 8	Խորվաթիա	- 25
Իսպանիա	- 9	Սլովենիա	- 26
Հարավսլավիա	- 10	Սլովակիա	- 27
Մեծ Բրիտանիա	- 11	Բելառուս	- 28
Ավստրիա	- 12	Էստոնիա	- 29
Լյուքսեմբուրգ	- 13	Մոլդովայի Յանրապետություն	- 30
Նորվեգիա	- 16	Բուլղարիա եւ Հերցեգովինա	- 31
Դանիա	- 18	Լատվիա	- 32

Համապատասխան թվեր պետք է վերագրվեն.

(i) 1958թ. Անվավոր փոխադրամիջոցների սարքավորումների եւ մասերի համար

հաստատման միասնական պայմանների եւ հաստատման փոխադարձ ճանաչման ընդունմանը

վերաբերող համաձայնագրի Պայմանավորվող կողմերին՝ միեւնույն թվերը, որոնք այդ պետություններին վերագրված են՝ ըստ այդ համաձայնագրի,

(ii) 1958թ. համաձայնագրի Պայմանավորվող կողմ չհանդիսացող պետություններին՝ ըստ սույն համաձայնագրի Վավերացման կամ դրան միանալու ժամանակագրական կարգի,

Եւ հսկիչ սարքի կամ գրանցման թերթիկի նմուշի համար տրված հաստատման հավաստագրի համարին համապատասխան հաստատման համարը տեղադրվում է այս ուղղանկյան անմիջական հարեւանությամբ:

Նշում: 1958թ. համաձայնագրի եւ ԱԵՏՐ համաձայնագրի պայմանական նշանների համապատասխանությունն ապագայում ապահովելու նպատակով երկու պայմանագրերում նոր

Պայմանավորվող կողմերին պետք է հատկացվեն միեւնույն նիշերը:

2. Հաստատման նիշը պետք է ցուցադրվի յուրաքանչյուր հսկիչ սարքի նկարագրող հարթակի եւ յուրաքանչյուր գրանցման թերթիկի վրա: Այս պետք է լինի անջնջելի եւ միշտ հստակ ընթեռնելի:

3. Ստորև նշված հաստատման նշանի չափսերը արտահայտված են միլիմետրերով, եւ այս չափսերը նվազագույնն են: Այս չափսերի միշտ պետք է պահպանվի հարաբերակցությունը:

-----  
ԻՐՏԵԿ - հաստատման նշանի պատկերը չի բերվում

1) Այս պատկերը ներկայացված է որպես օրինակ:

## II. ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Հաստատում շնորհած Պայմանավորվող կողմը պետք է դիմողին տա հաստատման հավաստագիր, որի ձեւը ներկայացված է ստորեւ: Երբ մյուս Պայմանավորվող կողմերը տեղեկացվում են հաստատումներ տալու կամ, որոշ դեպքերում, դրանց մերժման մասին, Պայմանավորվող կողմը պետք է օգտագործի այդ հավաստագրի պատճենները:

## ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ

Իրավասու մարմնի անունը .....

Նշումներ, որոնք վերաբերում են. \*

հսկիչ սարքի տիպի հաստատմանը,

հսկիչ սարքի տիպի հաստատման մերժմանը,

գրառումների թերթիկի տիպային նմուշի հաստատմանը,

գրառումների թերթիկի տիպային նմուշի մերժմանը:

Հաստատում իմ. ....

1. Ապրանքանիշը կամ անունը .....

2. Տիպային նմուշի անունը .....

3. Արտադրողի անունը .....

4. Արտադրողի հասցեն .....

5. Ե՞րբ է հանձնվել հաստատման համար .....

6. Փորձարկվել է .....

7. Փորձարկման մասին գեկուցագրի ամսաթիվը եւ համարը .....

8. Հաստատման ամսաթիվը .....

9. Հաստատման մերժման ամսաթիվը .....

10. Յսկիչ սարքի տեսակը կամ տեսակները, որում նախատեսվում է օգտագործել թերթիկները .....
  11. Վայրը .....
  12. Ամսաթիվը .....
  13. Կցված նկարագրող փաստաթղթերը .....
  
  14. Նշումներ .....
- (Ստորագրություն) .....

\* Զնշված պարագաները չեն կիրառվում

#### ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմերի աշխատանքի մասին եվրոպական համաձայնագիր ստորագրելով՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, համաձայնեցին ներքոհիշյալի վերաբերյալ:

Համաձայնող կողմերը հայտարարում են, որ սույն Համաձայնագիրը չի վնասում այն պայմանները, որոնք կարող են համապատասխան դեպքերում հետագայում կազմվել աշխատանքների տետողության եւ տարածման հարցում:

#### Հայտարարություն Համաձայնագրի 4-րդ հոդվածի վերաբերյալ

4-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները չպետք է մեկնաբանվեն որպես կիրառելի այն երկրից դուրս, որտեղ գրանցված է տրանսպորտային գործողություն կատարող տրանսպորտային միջոցը, եւ որեւէ արգելք չեն հանդիսանում այդ Պետությունում որոշակի օրերին կամ որոշակի ժամերին տրանսպորտային միջոցի որեւէ տեսակի երթեւեկության համար: 4-րդ հոդվածի 2-րդ կետի պայմանները չպետք է մեկնաբանվեն որպես խոչընդոտող հանգամանք Պայմանավորվող կողմերի համար՝ կիրառելու իրենց տարածքում տեղական օրենքների եւ կանոնների պայմանները, որոնք արգելում են տրանսպորտային միջոցների որոշակի տեսակների երթեւեկությունը որոշակի օրերին կամ որոշակի ժամերին:

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, լինելով հատուկ պայմանագրի Կողմ, ինչպես նշված է սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 2-րդ կետում, թույլատրում է միջազգային տրանսպորտային գործողությունների սկիզբը եւ ավարտը նշված Համաձայնագրի Կողմեր հանդիսացող Երկրների տարածքներում փոխադրամիջոցներով, որոնք գրանցված են այն Պետության տարածքում, որը, լինելով սույն Համաձայնագրի Պայմանավորվող կողմ, չի հանդիսանում նշված հատուկ պայմանագրի Կողմ, կարող է այդ հանգամանքը որպես պայման դնել Երկնողմ կամ բազմակողմ պայմանագրերի կազման համար, որոնք թույլատրում են այնպիսի տրանսպորտային գործողություններ, եւ դրանք իրականացնող անձնակազմը կատարի նշված հատուկ Պայմանագրի պայմանները հատուկ Պայմանագրում նշված կողմերի Երկրների տարածքներում:

#### Հայտարարություն Համաձայնագրի 12-րդ հոդվածի վերաբերյալ

Ներքոստորագրյալները պարտավորվում են Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո փոփոխության միջոցով ընսարկել գետեղված հավելվածի այն կետը, որն ապահովում է տրանսպորտային միջոցում տեղադրված հսկիչ սարքի հաստատված տիպի օգտագործումը, որը կարող է հնարավորության սահմաններում փոխարինվել անհատական վերահսկման գործույկով:

#### Հայտարարություն Համաձայնագրի 14-րդ հոդվածի վերաբերյալ

Պայմանավորվող կողմերն ընդունում են, որ ցանկալի կլինի՝

- յուրաքանչյուր կողմ ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ, որոնք Համաձայնագրի պայմանները խախտելու դեպքում հնարավորություն են տալիս գործի դնելու ընթացակարգը ոչ միայն այն դեպքում, երբ խախտումները կատարվել են իր տարածքում, այլ նաև այլ երկրի տարածքում՝ այն ժամանակահատվածում, երբ Պայմանագրով կողմի գրանցած փոխադրամիջոցով կատարվել են միջազգային ճանապարհատրանսպորտային գործողություններ.

- միմյանց օգնել՝ կատարված խախտումների համար տուգանքներ նշանակելու նպատակով:

Հայտարարություն Համաձայնագրի հավելվածի վերաբերյալ

Չնայած սույն Համաձայնագրի հավելվածի ընդհանուր դրույթների 4-րդ կետի պահանջներին՝ Ծվեյցարիան կարող է անտեսել այն պահանջը, ըստ որի գործատուն պետք է անձնական վերահսկման գրքում ստորագրի շաբաթական գեկույցը:

Ի Հաստատում որի՝ պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Ժնեվում, հազար ինք հարյուր յոթանասուն թվականի հուլիսի մեկին, մեկ քսորինակով, անգլերեն եւ ֆրանսերեն. ընդ որում՝ երկու տեքստերն ել հավասարագոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2006թ. դեկտեմբերի 6-ից: